

ՂԱՐԱԲԱՂԵԱՆ ԿԱՐԳԱԴՈՐՄԱՆ ՄԵՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ

ՄԱՐԿ ՆՇԱՆՆԱՆ

Ազգային ժողովի հուժկու նիստի ամենազաւեշտալի բաղադրիչն, իհարկէ, այն պահն էր, երբ «ձեռքի հետ» քննարկում էին նաեւ՝ արժէ՞՞ ճանաչել ԼՂՀ անկախութիւնը, թէ ոչ: Իրավիճակը չիշեցնում էր «Ձախորդ Փանոսը» ֆիլմի այն դրուագը, երբ Փանոսը գիշերը գնում է իրենց տուն, որտեղ իր իսկ քեղեխի սեղանն է, հաւաքուածներն էլ աղմուկի վրայ դուրս են վազում, ու մէկն առաջարկում է շրջապատել, միւսն ասում է «վիտ վերցրէ՛ք», երրորդն ասում է «վախտը չի» եւ այլն: Պարզ ասած, մարդիկ կոնկրետ գործողութիւնների պլան են մշակում եւ քննարկում «վախտն ա», թէ «վախտը չի»՝ առանց հասկանալու իրավիճակը եւ վերջնական նպատակը:

Ամբողջ խնդիրն այն է, որ ԼՂՀ անկախութիւնը ճանաչելու ճանաչելու հարցը հնարաւոր է քննարկել միայն այն դէպքում, եթէ յստակ պատկերացում կայ, թէ ինչպէս է Հայաստանը պատ-

միջազգային հանրութիւնն էլ կ'ընդունի դրա արդիւնքները: Իսկ եթէ չստացուի՝ նորից մեղքը բարդել միջազգային նենգ հանրութեան վրայ:

Ամբողջ խնդիրն այն է սակայն, թէ ՀՀ այսօրուայ իշխանութիւններն այս տարբերակներից որն են ընտրել եւ որի իրականացման ուղղութեամբ են աշխատում: Օրինակ, եթէ Սերժ Սարգսեանն ընտրել է առաջին կամ երրորդ տարբերակը, ԼՂՀ անկախութիւնը հաստատ չարժէ՞ ճանաչել, իսկ եթէ ընտրել է երկրորդ տարբերակը՝ ԼՂՀ անկախութեան ճանաչման համար աւելի նպաստաւոր պահ պարզապէս դժուար է պատկերացնել: Միւս կողմից էլ՝ խնդիրն այնպիսին է, որ Սերժ Սարգսեանը հաստատ բարձրաձայն չի ասելու, թէ կոնկրետ որ ճանապարհով է գնում, առաւել եւս՝ անհնար է պատկերացնել, որ նման լուրջ քննարկումներ տեղի կ'ունենան խորհրդարանում (եթէ նոյնիսկ փակ քննարկումներ լինեն, արտա-

Ամբողջ խնդիրն այն է, որ ԼՂՀ անկախութիւնը ճանաչելու ճանաչելու հարցը հնարաւոր է քննարկել միայն այն դէպքում, եթէ յստակ պատկերացում կայ, թէ ինչպէս է Հայաստանը պատրաստուում հասնել դարաբաղեան խնդրի վերջնական կարգաւորմանը

րաստուում հասնել դարաբաղեան խնդրի վերջնական կարգաւորմանը: Պարզ ասած, տուեալ քայլի քննարկումն իմաստ ունի միայն այն դէպքում, եթէ կարգաւորման ճանապարհը սկզբից մինչեւ վերջ նախանշուած է. այդ դէպքում մնում է միայն պարզել՝ տուեալ քայլը մեզ ճիշդ ճանապարհն ո՞վ է տանում, թէ ոչ: Իսկ խորհրդարանական ուժերը, հասկանալի է, տեղեակ չեն բանակցութիւնների իրական ընթացքից (Տէր-Պետրոսեանի օրօք, օրինակ, ամբողջական ինֆորմացիային տիրապետում էր վեց հոգի, իսկ հիմա այդ թիւը հաստատ աւելի փոքր է):

Խօսենք աւելի կոնկրետ: Տեսականօրէն Հայաստանը կարող է դարաբաղեան խնդրի վերջնական կարգաւորման մի քանի պլան ունենալ:

1. Ներկայ իրավիճակը պահպանել եւ բանակցութիւններն այնքան ձգձգել, մինչեւ Ատրպէյճանը ճանաչանայ, վերջնականապէս հաստատի Ղարաբաղի կորստի հետ ու համաձայնուի ընդունել ԼՂՀ անկախութիւնը՝ յարակից տարածքների վերադարձի դիմաց:

2. Սպասել, մինչեւ Ատրպէյճանը յարձակուի, հասնել նրան, որ միջազգային հանրութիւնն Ատրպէյճանին ճանաչի որպէս ազրեանը, յաղթել այդ պատերազմում (ասենք՝ հասնել մինչեւ Քուր գետը) եւ նոր իրավիճակում հասնել ԼՂՀ անկախութեան միջազգային ճանաչմանը:

3. Բանակցութիւնների ընթացքում կամաց-կամաց գիշել ազատագրուած տարածքները եւ ձեւացնել, թէ հաւատում ենք, որ դրանից յետոյ Ղարաբաղում նորմալ հանրաքուէ կ'անցկացուի, ու

հոսքն անխուսափելի է): Հենց սա է պատճառը, որ խմբակցութիւններից մէկն առաջարկում է ԼՂՀ անկախութեան հարցը մտցնել Աժ օրակարգ, միւսներն էլ ոչ կարողանում են կապակցուած ձեւով բացատրել, թէ դա ինչու է ի կարելի անել, ոչ էլ կարողանում են հողաբաշխ բացատրութիւն տալ, թէ ինչու է այդ քայլն ընդհանուր առմամբ ճիշդ, բայց՝ առայժմ ժամանակավրէպ: Սա միանգամայն հասկանալի է. եթէ վերջնական նպատակի հարցում յստակութիւն չկայ, չի կարելի որոշել շարժման ուղղութիւնը:

Սերժ Սարգսեանն, ի դէպ, երէկ կարծիք է յայտնել, թէ իր մարդասպանին ազատ արձակելով՝ Ալիեւը միջազգային հանրութեան արձագանքն է ստուգում (որպէսզի եթէ այդ արձագանքը շատ կոշտ չլինի՝ նրանք «արխային» յարձակուեն): Ալիեւի էքսպերիմենտը կարելի է յաջողուած համարել. միջազգային հանրութիւնը մի թեթեւ աղմուկ բարձրացրեց, եւ վերջ: Բայց այստեղ խնդիրն այլ է՝ մի՞թէ մենք ուրիշ ակնկալիք ունէինք միջազգային հանրութիւնից, կամ մի՞թէ մեր յոյսը միջազգային հանրութեան կոշտ արձագանքն է: Եթէ այո, ապա չարաչար սխալուած ենք. միջազգային հանրութիւնը կարող է «գոռալ, ճչալ, քացի տալ, դա հինաւուրց-գեղեցիկ աւանդույթ է», բայց դրանից այն կողմ չի անցնի: Իսկ եթէ ոչ, ապա պէտք է վերջապէս հասկանալ, թէ որն է դարաբաղեան կարգաւորման մեր սցենարը: Կամ գոնէ հաւաստիացումներ ստանալ, որ այդպիսի սցենար կայ, եւ այն իրատեսական է:

«ՉՈՐՐՈՐԴ ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԵՐ ԱԶԻԶ ԱՆՊԵՐ ԻԼՅԱԸ

ԳԵՈՐԳ ԼԱԼԱՅԵԱՆ

Խոշոր հաշուով, վհատուել պէտք է, որ Աստուած մեզ իշխամի պէս հարեւան է տուել: Դեռ մի բան էլ պէտք է թաքուն ուրախանալ, երախտապարտ լինել նախանամութեանը, որ այդքան բարեգութ է եղել հայութեան հանդէպ: Չգիտեմ՝ ով է ասել, բայց շատ դիպուկ է նկատուած. լաւ է ունենալ տխմար թշնամի, քան խորամանկ բարեկամ: Այդ տեսակետից հայերի բախտը բերել է. իշխամի պէս մէկ թշնամին հարիւր կասկածելի բարեկամ արժէ:

Եւ իսկապէս, բոլոր այն բարիքները, որ իր իշխանութեան օրօք մեր ազգի համար, թէկուզ ակամայ արել եւ շարունակում է անել անգուզական Հեյդարօղլին, Հայաստանը չի տեսել ոչ ժողովրդավար, քաղաքակիրթ Եւրոպայից, ոչ բարեկամ համարուող

խարհում միայն իշխամ Ալիեւը կարող է ատելութեան, անհանդուրժողութեան եւ ներքին չարութեան «խմորից» պատրաստել հայ թշնամու այնպիսի հրեշաւոր կերպար, որի ահից միջին վիճակագրական ատրպէյճանցի զինապարտը կը նախընտրի գլուխն առնել, հեռանալ իր երկրից, քան երբեւէ գործ ունենալ մարդկային կերպարանքը կորցրած, ամենադաժան հաշուհարդարի ունակ հակառակորդի հետ: Եւ դա ո՞ւմ օգտին է: Անշուշտ՝ Արցախի: Որքան շատ հայից սարսափի թշնամին ու հեռու ծլիկ, այնքան աւելի անառիկ կը մնան Արցախի սահմանները:

Այս շարքը կարելի է երկար շարունակել, բայց ասուածն էլ բաւական է՝ համոզուելու համար, թէ իսկապէս որքան բարեհաճ է եղել Արարիչը՝ մեզ այդպիսի դրացի ընծայելով: Մեր նեղ օրին

Ալեկին, մէկ գիշերուայ մէջ նա ի շահ Հայաստանի կատարեց այնքան գործ, որքան երկու տասնամեակում ի գորու չեղան կատարելու մեր արտաքին քաղաքական գերատեսչութիւնը, ՀՀ իշխանութիւնները, քարոզչական մեքենան եւ խորհրդարանական դիւանագիտութիւնը

ԱՄՆ-ից, ոչ էլ անգամ մեր ռազմավարական գործընկեր Ռուսաստանից, ում հայկական որոշ շրջանակներ սիրում են պաշտամունքի համոզող, սակայն... անպատասխան սիրով: Բայց սա այլ թեմա է:

«Լաւ, իսկ այդ ո՞ր բարի արարքների համար ենք պարտական թշնամի երկրի նախագահին», - կը հարցնի տարակուսած ընթերցողը: Պարզաբանենք՝ սկսելով ամենաթարմ օրինակից: Ասացէք, խնդրեմ, ո՞վ աշխարհի համար պարզ դարձրեց, որ արցախցին այլեւս երբեք չի կարող ապրել մի պետութեան կազմում, որը քնած մարդուն կացնահարող բաշիբոզակին հերոսացնելու մակարդակից դեռ չի աճել: Անտարակոյս՝ իշխամ Ալիեւը:

Ալեկին, մէկ գիշերուայ մէջ նա ի շահ Հայաստանի կատարեց այնքան գործ, որքան երկու տասնամեակում ի գորու չեղան կատարելու մեր արտաքին քաղաքական գերատեսչութիւնը, ՀՀ իշխանութիւնները, քարոզչական մեքենան եւ խորհրդարանական դիւանագիտութիւնը միասին վերցրած: Այդպէս, Հունգարիայի հետ խայտառակ գործարքի գնալով՝ Ալիեւ կրտսերը քողազերծեց բռնապետական, ոճրագործ Ատրպէյճանի իրական դէմքը:

Երկրորդ, ո՞վ մերժեց «Մարրիդեան» կոչուող սկզբունքները՝ թոյլ չտալով, որ հայերը կորցնեն ազատագրուած տարածքները: Յամենայն դէպս, դրանց գերակշիռ մասը: Դարձեալ մեր «ազիզ ախպերը»: Ո՞վ ռազմատենչ իր յայտարարութիւններով, պատմութեան կեղծարարութեամբ, քարանձաւային վայրագութեանը բնորոշ գործողութիւնների կազմակերպմամբ, օրինակ՝ Նախիջեւանի հայկական գերեզմանոցի խաչքարերի, մշակութային մեր միւս կոթողների ոչնչացման ձեռնարկմամբ, կարծես թէ բացեց միջազգային հանրութեան քնկոտ աչքերը:

Էլի՛ օրինակներ... խնդրեմ: Ո՞ւմ յայտնի չէ, որ համայն աշ-

համոզ այդպիսի «ազիզ ախպեր»: Այլապէս հայոց փոքր ու վտիտ օրրանը կուլ կը գնար:

Շատ ցաւալի կը լինի միայն, եթէ Հայաստանի եւ Արցախի բարձրաստիճան իշխանաւորները, պատկան շրջանակները չկարողանան լաւագոյնս օգտուել Տիրոջ ողորմածութիւնից կամ, որ նոյնն է, իշխամի տհասութեան պտուղներից:

Բաց թողնել այդպիսի պատեհութիւնը՝ նշանակում է իշխամից աւելի տհաս լինել:

«ՀԵՏՔ»

ՄԱՍԻՍ ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՊԱՇՏՏՈՒՄԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ ՀՆՁՄԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱՐԻԷԼ ՄՈԼՈՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆՆ «ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Ե ԻՐ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆՆ ԱՌԱՋԱԴՐԵԼՈՒ ԿՐԱՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ»

Հայ ազգային կոնգրեսի առաջնորդ, նորանկախ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը, ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց կոնգրեսի խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Լեւոն Զուրաբեանը, ուսումնասիրում է գալիք ֆետրուարի նախագահական ընտրութիւններում առաջադրուելու հարաւորութիւնները:

«Տէր-Պետրոսեանը շատ լուրջ պէտք է քննարկի բոլոր գործօնները քաղաքական, բոլոր ռեսուրսները՝ մինչեւ կարողանայ որոշում ընդունել այդ ուղղութեամբ», - նշեց Զուրաբեանը՝ շարունակելով. - «Կարելի էն այլ քաղաքական ուժերի մօտեցումները: Եւ այդ ամէնը պէտք է ճշդել. ե՛ւ ներքաղաքական առումով մեր յարաբերութիւնները, ե՛ւ արտաքին քաղաքական առումով մեր յարաբերութիւնները: Պէտք է հասկանալ, թէ ինչ նախադրեալներ կան նման որոշման ընդունման համար»:

Հարցին, թէ որքանով առաջին նախագահի որոշման վրայ

կարող է ազդել այլ քաղաքական ուժերի հնարաւոր աջակցութիւնը նախագահի ընտրութիւններում, Զուրաբեանը պատասխանեց. - «Դա բնական է: Ցանկացած լուրջ թեկնածու, զնահատելով իր շանսերը որեւէ ընտրութիւններում, նաեւ կատարում է իր դաշնակիցների ինվենտարիզացիա: Բանակցում է, փորձում է հասկանալ, թէ ինչ կոնֆիգուրացիայով կ'անցնեն ընտրութիւնները»:

Զուրաբեանը յաւելեց, որ պաշտօնական բանակցութիւններ այդ հարցով առայժմ չեն ընթանում:

Կոնգրեսի ղեկավար ներկայացուցիչը յաւելեց, որ եթէ Տէր-Պետրոսեանն առաջադրուի եւ նրան սատարեն հիմնական քաղաքական ուժերը, ապա դա «յաղթող սցենար» կը լինի: Ի պատասխան հարցին, թէ հնարաւոր է, որ այդ ուժերից «Բարգաւաճ Հայաստան»-ը աստարի Տէր-Պետրոսեանին, Զուրաբեանն ասաց, թէ այդ հարցը պէտք է ուղղել «Բարգաւաճ Հայաստան»-ին:

ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԸ ԾԱՌՈՒԿԵԱՆԻ ՄԱՍԻՆ ՈՐԵՒԷ ՏԵՍԱԿԵՏ ԶԻ ՅԱՅՏԵԼ

Անցած շաբաթ պատգամաւորական մանդատից հրաժարուելու դիմում ներկայացրած Ռուբէն Հայրապետեանը Երկուշաբթի, Սեպտեմբեր 10-ին խորհրդարան էր եկել:

Հանրապետական պատգամաւորը մինչեւ Սեպտեմբեր 21-ը իր հրաժարականի դիմումը ետ վերցնելու հնարաւորութիւն ունի: Լրագրողները սպասում էին, որ Հայրապետեանը խորհրդարան կը գա՝ հաշուի առնելով հայկական մամուլում տեղ գտած Les Nouvelles d'Armenie-ի հարցազրոյցի սղագրութիւնը, որտեղ Հայրապետեանն ասել էր, թէ Սեպտեմբերի 10-ին գնալու է խորհրդարան եւ մանդատից հրաժարուելու դիմումը ետ է վերցնելու:

Les Nouvelles d'Armenie-ին տուած հարցազրոյցում Հայրապետեանը սպառնալիքներ էր հնչեցրել «Հարսնաքարի» գործի բացայայտման համար պայքարող ակտիւիստների հասցէին՝ ասելով, թէ այդ ակտիւիստների ընտանիքները «իր ձեռքը կրակն են ընկնելու, բոլորը շաքարով են հիւանդանալու»:

Այդ նոյն հարցազրոյցում Հայրապետեանը ակտիւիստների գործունէութիւնը կապել էր նախկին նախագահ Ռոբերտ Բոչարեանի հետ:

«Նրանք ի՞նչ պիտի անեն: Պիտի թուլացնեն, խայտառակեն, վարկաբեկեն Սերժ Սարգսեանի հաւատարիմ մարդկանց, որպէսզի «Բարգաւաճ Հայաստան» Ռոբերտ Բոչարեանի հետ գայ իշխանութեան: Ո՞ւմ համար պարզ չէ», - ասել էր Հայրապետեանը եւ մանրամասնել, թէ անձամբ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանն է ֆինանսաւորում ակտիւիստներին:

Անդրադառնալով ՀՀԿ խորհրդի անդամի այս յայտարարութիւններին՝ ՀՀԿ-ի փոխնախագահ Գալուստ Սահակեանն ասաց, թէ ծանօթ չէ Les Nouvelles d'Armenie-ի այդ հրապարակմանը, բայց չի կարծում, որ Հայրապետեանը նման յայտարարութիւններ է արել Ծառուկեանի հասցէին: «Պարզապէս պիտի հետը խօսել, որպէսզի իմանամ, այդ հարցազրոյցը եղե՞լ է, թէ՞ չի եղել: Ես



Հանրապետական պատգամաւոր Ռուբէն Հայրապետեան

ժխտում եմ, նման բան եղած չի լինի: Կարող է անհասկանալի է եղել, այդպէս է վերծանուել... Ես այդպիսի յարաբերութիւններ չեմ տեսնում, որ Ռուբէն Հայրապետեանը Գագիկ Ծառուկեանի մասին խօսի, կամ հակառակը», - ասաց Սահակեանը:


«Բարգաւաճ Հայաստան» խորհրդարանական խմբակցութեան քարտուղար Նաիրա Զոհրաբեանը, անդրադառնալով նոյն խնդրին, ասաց, թէ այդ հրապարակումից անմիջապէս յետոյ հեռախօսազրոյց է տեղի ունեցել Ռուբէն Հայրապետեանի եւ Գագիկ Ծառուկեանի միջեւ եւ Հայրապետեանը «տղամարդու երզումով» հաւատարմացրել էր, թէ այդ հրապարակումը իրականութեանը չի համապատասխանում:

«Ասել է, որ ինքը ընդհանրապէս ԲՀԿ-ի կամ Գագիկ Ծառուկեանի վերաբերեալ որեւէ տեսակէտ, որեւէ յայտարարութիւն, որեւէ ձեւակերպում չի հնչեցրել, եւ հրապարակումը չի համապատասխանում իրականութեանը», - ասաց Զոհրաբեանը՝ շարունակելով. - «Եթէ տղամարդը տղամարդու երզումով ասում է, որ ինքն նման յայտարարութիւններ չի հնչեցրել, ապա մենք ի դիտարկում ենք ընդունում այդ յայտարարութիւնը»:

Հայաստանի երկրորդ նախագահ Ռոբերտ Բոչարեանի ղեկավար Վիկտոր Սողոմոնեանը ասաց, թէ ՀՀԿ-ում Հայրապետեանի յայտարարութիւնները:

ԿԱՐԷՆ ՔՈՉԱՐԵԱՆ. «ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԸՆԹԱՆԱԼՈՒ Է ԱՌԱՋԻՆ, ԵՐԿՐՈՐԴ ԵՒ ԵՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՅՆԵՐԻ ՄԻՋԵՒ»

Այն խայթոցները, հարցազրոյցները, որ կան մամուլում, արդէն խօսում են այն մասին, որ ակտիւ քաղաքականութեան մեկնարկը տրուել է: Այս մասին Սեպտեմբերի 11-ին հրաւիրուած ասուլիսին ասաց քաղտեխնոլոգ Կարէն Քոչարեանը՝ աւելացնելով, որ խօսքը, թէ Ռուբէն Հայրապետեանի, թէ Տիգրան Ուրիխանեանի հարցազրոյցների մասին է:



Քաղաքական մեկնաբան Կարէն Քոչարեան

Հայրապետեանը, լինելով ոչ քաղաքական գործիչ, բայց նաեւ ոչ պատահական մարդ ՀՀԿ-ում եւ իշխանութեան մէջ, իր հարցազրոյցում նախանշում է արգելապատնէշից այս եւ այն կողմ սահմանները: Քաղտեխնոլոգը դրա մէջ նաեւ մեկնաբան է տեսնում:

Կարէն Քոչարեանը ընդգծեց, որ, ցաւոք, նախագահական պայքարը ընթանալու է առաջին, երկրորդ եւ երրորդ նախագահների միջեւ: «Ինչո՞ւ ցաւոք, որովհետեւ հերթական անգամ մեր ժողովուրդը, թէ քաղաքական դաշտը չի նայում առաջ, այլ նայում է հետ», - նշեց Կարէն Քոչարեանը:

Ըստ քաղտեխնոլոգի, այս անգամ մօտ 20 օր շուտ տրուեց մեկնարկը՝ չսպասելով Սեպտեմբերի 21-ին: Կարէն Քոչարեանը նշեց, որ ինքը շատ յարգում է Հրանդ Բազրատեանին, բայց համաձայն չէ նրա այն առաջարկի հետ, որ միասնական թեկնածուի ընտրութեան հարցը պէտք է թողնել ժողովրդի վրայ: «Եթէ ժողովրդի վրայ ենք գցում, դա ուտոպիա է: Աւելին՝ քաղաքական գործիչների մօտ հիւանդութիւն է դարձել, երբ իրենք ուժեղ են, ժողովրդին չեն չիշում, բայց հենց թոյլ են, չիշում են: Ինչո՞ւ 2007թ-ին չէին հարցնում՝ Լեւոն Տէր-Պետրոսեանը առաջադրի՞ր թեկնածութիւնը, թէ՞ ոչ», - նկատեց Կարէն Քոչարեանը: Անդրադառնալով Ռուբէն Հայրապետեանի հարցազրոյցին Կարէն Քոչարեանը ասաց, որ Ռուբէն

ՍԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՍԱՆԵԱՆՆ ԸՆՏՐՈՒԵԼ Է ԳԻՒՄՐԻԻ ԲԱՂԱՔԱՊԵՏ

Գիւմրիում Սեպտեմբեր 9-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների նախնական տուեալներով Գիւմրիի քաղաքապետ է ընտրուել «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչ Սամուէլ Բալասանեանը, ում սատարում էր նաեւ իշխող Հանրապետական կուսակցութիւնը:

Նախնական տուեալներով Սամուէլ Բալասանեանը հաւաքել է շուրջ 27 հազար 500 քուէ: Երկրորդ տեղում դաշնակցական Յովսէփ Սիմոնեանն է, ով 10 հազար 281 ձայն է հաւաքել: Բալասանեանի միւս երկու՝ անկուսակցական մրցակիցները անհամեմատ քիչ ձայներ են հաւաքել: Անդրանիկ Աւետիսեանի օգտին քուէարկել է մօտ 2458, Սպարտակ Պետրոսեանի օգտին՝ 2130 ընտրող:

Սամուէլ Բալասանեանը քաղաքապետի պաշտօնը կը ստանձնի

Հոկտեմբերի 26-ին՝ այդ օրը լրանում է գործող քաղաքապետ Վարդան Ղուկասեանի լիազօրութիւնների ժամկէտը: Ղուկասեանը քաղաքապետի պաշտօնը վարում է արդէն 13 տարի անընդմէջ:

Յովսէփ Սիմոնեանը, չի բողոքարկելու ընտրութիւնների արդիւնքները, թէեւ՝ չի էլ շնորհաւորի Սամուէլ Բալասանեանին, քանի որ վերջինս «ոչ թէ ընտրուել է, այլ նշանակուել»:

«Ցաւօք սրտի, մեր Սահմանադրութիւնը խախտուեց, եւ մարդը նշանակուեց»:

Նրա տպաւորութեամբ՝ սա «մինի-նախագահական» ընտրութիւններ էր. - «Այդ 27 հազար ձայնը, որ տարել է Սամուէլ Բալասանեանը, այս քաղաքում բոլոր ուժերը՝ Բարգաւաճ, Հանրապետական, անհատներ, նախագահ, Գագիկ Ծառուկեան, բոլորը ձայներ ունեն, բայց իրենից»:

ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԸ ՀՐԱԺԱՐՈՒՄ Է ՄԱՆԴԱՏԻՑ

Յովհաննիսեանը մանդատը չի վերցնում նախագահական ընտրութիւնների պատճառով: Պատգամաւորական մանդատից հրաժարուելու Բաֆֆի Յովհաննիսեանի որոշումը պայմանաւորուած է առաջիկայ նախագահական ընտրութիւններով: Այս մասին երկուշաբթի օրը Ազգային ժողովում յայտարարեց «Ժառանգութիւն» խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Ռուբէն Յակոբեանը:

«Ի վերջոյ համապետական ամենակարեւոր միջոցառումը նախագահական ընտրութիւններ են: Բաֆֆի Յովհաննիսեանը նաեւ կուսակցութեան ղեկավար է, եւ կուսակցութիւնը՝ ինքը, ահապիս գործեր ունի անելու, բայց պէտք է նկատի ունենալ, որ առաջիկայում նախագահական ընտրութիւններ են, եւ չի բացառուում, որ նա առաջադրուի որպէս նախագահի թեկնածու», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Յակոբեանը:

Կիրակի օրը «Ժառանգութիւն» կուսակցութեան վարչութիւնը «հաւանութիւն է տուել Բաֆֆի Յովհաննիսեանի զեկուցմանը եւ նախագահական ընտրութիւններին ընդառաջ յարգել է պատգամաւորական մանդատը չվերցնելու նրա որոշումը»:

ԼՈՒՐԵՐ

ՋԵՄԱԼ ՓԱՇԱՅԻ ԹՈՒՐ ԶԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԳԻՐՔ Է
ՀՐԱՊԱՐԱԿԵԼ

Թուրքիայում Հայոց ցեղասպանության հեղինակներից մեկի՝ Ջեմալ փաշայի թուրք գիրք է հրատարակել «1915. Հայոց ցեղասպանություն» վերնագրով: Այդ մասին առաջին անգամ յայտնել է «Ակոս» շաբաթաթերթը, տեղեկատվությունը հաստատել է լրագրող Եսաուզ Բայդարին:



Հասան Ջեմալի «1915. Հայոց ցեղասպանություն» վերնագրով

Հասան Ջեմալը «Միլլիթ» թերթի տեսաբանն է: 2008 թուականին նա Երեւանում այցելել է Հայոց ցեղասպանության գոհերի յուշահամալիր: Յուշագրքում նա գրել է. «Ժխտել ցեղասպանությունը, նշանակում է մասնակից լինել մարդկության դեմ այդ ոճրին»:

Ահմետ Ջեմալ փաշան սպանուել է 1922 թուականի Յուլիսի թերթի խմբագրի Ստեփան Ծաղիկեանի, Արտաշէս Գէորգեանի եւ Պետրոս Տէր-Պողոսեանի «Նեմեզիսի» շրջանակում: Նրա մնացորդները տեղափոխուել են էրզրում եւ թաղուել:

Հասան Ջեմալը գրել է. «Մենք չենք կարող առաջ շարժուել՝ չնայելով անցեալի դէմքին եւ իրադարձութիւններին: Բացի դրանից, 1915 թուականի ցաւը պատմութիւնն է, այլ ընթացիկ հարց»:

Գրքի առաջին գլխում պատմուել է, թէ ինչպէս է Հասան Ջեմալը իմացել 1915 թուականի իրադարձութիւնների մասին: Այնուհետեւ

հեղինակը կենտրոնանում է այն բանի վրայ, թէ ինչպէս է նա արել այն, ինչն անուանում է «հայրասպանություն»՝ Հրանդ Տինքի սպանությունից յետոյ: Գրքի երկրորդ գլուխը պատմում է, թէ ինչպէս է հեղինակը նախկինում մտածել 1915 թուականի իրադարձութիւնների մասին եւ ինչպէս է փոխել իր տեսակէտը: Երրորդ՝ «Փաշա պապ կամ Ջեմալ փաշայի ընտանիքը» գրքում պատմուել է, թէ ինչպիսին են եղել Ջեմալ փաշան եւ նրա ընտանիքը:

«Memleket» կայքը հրատարակութեան մասին գրել է. «Հասան Ջեմալի գիրքն իր աւանդն է ներդրում առողջ քննադատութեան զարգացման ոլորտում»: Իսկ լրագրողուհի Եսաեմին Չոնգարը յայտարարել է, որ Հասան Ջեմալը կոչ է անում թուրքերին լինել քաջ, «քանի որ նա արդար մարդ է: Նա խիզախ մարդ է: Լաւ մարդ է»:

«ԹՈՒՐԲԻԱՆ ԼՈՒՑ, ԵՐԲ ԱՂԻԲԵՋԱՆՆ
ԱՆԱՍՕԹԱԲԱՐ ՆԵՐՈՒՄ ՇՆՈՐՀԵՑ».-ԻԻՐԻՅԵԹ

Թուրքական «Հիւրըրիթ» թերթը «Ջրո խնդիրների քաղաքականություն Ադրբեջանի հետ» իր անդրադարձում Թուրքիային անուանում է տարածաշրջանային տէրութիւն, միջազգային «խաղող» եւ կարծիք յայտնում, որ երկիրն անամօթաբար լուել է Ադրբեջանում «Սաֆարովի գործի» վերաբերեալ:

Յօդուածագիր Բարձին Եինանը նշում է, որ տարիներ առաջ երկրի արտգործնախարար Ահմետ Դաւութօղլուն յայտնել էր, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը ներառուել է ամբողջ աշխարհը: Նա ասել էր, որ Թուրքիան լինելու է այն խելացի երկրներից մէկը, որոնք ձեւաւորում են նոր աշխարհակարգ:

«Եւ իսկապէս, եղել են ժամանակներ, երբ Թուրքիան միջնորդ է եղել սերբերի եւ բոսնիացիների միջեւ, միջամտել է Լիբանանի ճգնաժամին, փորձել բանակցային սեղանի շուրջ նստեցնել սիրիացիներին եւ իսրայէլցիներին: Եղել է նաեւ, որ որոշ աֆրիկեան երկրներ Թուրքիային խնդրել են իրենց ներկայացնել Մեծ 20-յակում: Սակայն վերջին կէս տարում Թուրքիայի ամբողջ օրակարգը տակնուվրայ են արել Սիրիայի ճգնաժամն ու քրդական խնդիրը», - գրում է յօդուածագիրը:

Նա արձանագրում է՝ Մեանմայից բացի, Թուրքիան շատ ուշադրութիւն չի դարձրել այլ կարեւոր միջազգային խնդիրների: Ըստ յօդուածագրի, սակայն,

Թուրքիայի «զրո խնդիրներ հարեւանների հետ» քաղաքականությունից, ճակատագրի հեղանքով, տուժել է Ադրբեջանը, որն իրեն դաւաճանուած է զգում՝ Հայաստանի հետ հաշտուելու ջանքերի պատճառով: Յօդուածի համաձայն, այն բանից յետոյ, երբ Թուրքիան 180 աստիճանի շրջադարձ կատարեց Հայաստանի հանդէպ տարուող քաղաքականութեան մէջ, Թուրք-ադրբեջանական յարաբերութիւնները կրկին ջերմացան: Նկատուել է, որ կարճ ժամանակում Ադրբեջանը կարող է դառնալ թիւ 1 օտարերկրեայ ներդրողը Թուրքիայում, քանի որ ադրբեջանական ներդրումներն արագ աճ են գրանցել:

«Բաքուի հետ յարաբերութիւններն այժմ այնքան արժէքաւոր են Թուրքիայի համար, որ կառավարութիւնը լուծութիւն պահանջեց, երբ Բաքուն անամօթաբար ներում չնորհեց ու նոյնիսկ բարձրացրեց Հունգարիայում հայի սպանած ու Բաքուին վերադարձուած ադրբեջանցի զինուորականի կոչումը», - գրում է յօդուածագիրը:

Շարունակելով՝ Եինանը գրում է, որ միւս կողմից էլ Ադրբեջանն անդրուելի է մնում վիզային ու ռեժիմը վերացնելու Թուրքիայի խնդրանքի հանդէպ: «Նոյնիսկ վարչապետ Ռեջէփ Թայիփի էրդողանի նշանաւոր խարդման իշխամ Ալիեւի դէպքում կարող է չգործել: Ալիեւին երբեք էլ առանձնապէս չի հետաքրքրել Թուրքիայի վարչապետը», - գրում է թերթը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍ Է ԹՈՒՐԲԻԱՅԻ ՀԵՏ
ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼ «ՀԵՆՑ
ԱՅՍՕՐ»

«Մենք ձեզ առաջարկում ենք անյապաղ հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ եւ բացել սահմանները», - յայտարարել է Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսեանը՝ ԵԱՀԿ-ում հաւատարմագրուած դեսպանների հետ կապեցած հանդիպման ժամանակ արձագանքելով ԵԱՀԿ-ում Թուրքիայի դեսպանի դիտարկմանը, թէ Հայաստանը եւ Թուրքիան պէտք է առաջ շարժուեն՝ նայելով ապագային:

«Յոյս ունեմ, որ Դուք Ձեր այդ մտեցումը կը կարողանաք տարածել Թուրքիայում, որպէսզի Թուրք ժողովուրդը կիսի Ձեր տեսակէտն առ այն, որ կարելի է հենց այսօր էլ, նայելով դէպի ապագան, Հայաստանի հետ հաստատել դիւանագիտական յարաբերութիւններ: Պարզապէս պէտք է դրսևորել քաղաքական կամք», - կառավարութեան տեղեկատուութեան եւ հասարակայնութեան հետ կապերի վարչութեան փոխանցմամբ, ասել է Տիգրան Սարգսեանը՝ շարունակելով. - «Մենք այդ քաղաքական կամքը դրսևորել ենք եւ ներկայումս էլ Ձեզ հաստատում ենք, որ պատրաստ ենք հենց այսօր դիւանագիտական

յարաբերութիւններ հաստատել մեր հարեւանի հետ»:

«21-րդ դարում դիւանագիտական յարաբերութիւններ չունենալը մեզ տեղափոխում է մի քանի դար հետ: Եկէք դուք էլ դրսևորէք այդ բարի քաղաքական կամքը եւ առանց նախապայմանների դիւանագիտական յարաբերութիւններ հաստատէք Հայաստանի հետ: Մենք մեր քայլը կատարել ենք, գնդակը գտնուում է ձեր դաշտում: Մեզ համար կարեւոր է, որ մեր այս տեսակէտը կիսուել են ե՛ւ Եւրամիութիւնը, ե՛ւ ԱՄՆ-ը, ե՛ւ Ռուսաստանը», - ընդգծել է Հայաստանի վարչապետը:

«Դուք պէտք է ձեր հասարակութեանը կարողանաք համոզել, որ չի կարելի միջպետական յարաբերութիւնները պայմանաւորել ձեր բարեկամական Ադրբեջանի հետ եւ Լեւոնային Ղարաբաղի հարցի կարգաւորմամբ: Եթէ մենք հաւատարիմ ենք Լեւոնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգաւորմանը, իսկ մենք իրօք դրա կողմնակիցն ենք, ապա ձեր հասարակութիւններին պէտք է նախապատրաստէք այդ տեսլականին», - ասել է Տիգրան Սարգսեանը:

ՍԱՐԳՍԵԱՆ ԿԸ ՔՆՆԱԴՍԵ

Շարունակուած էջ 1-էն

կամարտութեան կողմերուն միջեւ փոխվատահոլութեան վնասող նման քայլ եւ կը սատարէ ԵԱՀԿ Մինսկի խումբի միջնորդական ջանքերուն:

Միւս կողմէ, Եւրախորհրդարանի հինգ հիմնական քաղաքական ուժերը բանաձեւերու նախագիծեր կազմած են, որոնց բոլորն ալ Ռամիլ Սաֆարովին ներում չնորհելու կապակցութեամբ մտահոգութիւն կ'արտայայտեն:

Պահպանողական խմբակցութիւնը մտահոգութիւն կը յայտնէ մարդասպան Սաֆարովին Պաքուի մէջ հերոսացնելու կապակցութեամբ:

Պահպանողականները նաեւ կը յայտնեն, որ այս խնդիրը կրնայ վտանգի տակ դնել Արեւելեան գործընկերութեան օրակարգի իրա-

կանացման ապագան:

Սոցիալիստներու խմբակցութիւնը իր նախագծին մէջ մտահոգութիւն կը յայտնէ Ատրպէյճանի նախագահ Ալիեւի կողմէ մարդասպանին ներում չնորհելու կապակցութեամբ, շեշտելով օրէնքի գերակայութիւնը եւ յանձնառութիւնները յարգելու կարեւորութիւնը:

Եւրոպական ժողովրդական կուսակցութեան խմբակցութիւնը մտահոգութիւն կը յայտնէ, որ դատապարտուած մարդասպանին Ատրպէյճանի կողմէ նման ընդունելութիւն ցոյց տալը կրնայ օրինակ ծառայել ապագայ սերունդներուն համար:

Տարբեր խմբակցութիւններու նախագիծերը ի մի բերուելով Եւրախորհրդարանը մէկ ընդհանուր բանաձեւ պիտի վաւերացնէ:

ՀԱԼԷՊԻ ՕՂԱԿԱՅԱՆԻ ՃԱՄՐՈՒՆ ԶՈՐՈՒԾ ԵՆ
4 ՀԱՅԵՐ

Շարունակուած էջ 1-էն

Հայաստան եկածները «Ազատութիւն» ռատիոկայանին պատմած են, որ կրակոցները արդէն լսելի են հայաշատ թաղամասերում մէջ, յատկապէս Նոր Գիւղ թաղամասը: Վերջին շրջանին թաղա-

մասին ներս ապստամբներու ներկայութեան պատճառով շատ մը հայեր լքած են իրենց բնակարանները՝ տեղափոխուելով այլ վայրեր: Սուրիական տազնապի հետեւանքով հայկական համայնքի կորուստները կը հասնին երկու տասնեակի:

ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱՏՐԱԿԻ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Շարունակուած էջ 1-էն

դիմաւորելու համար: Դիմաւորման պաշտօնական արարողութենէն ետք, խոսեցանները՝ նախագահի գլխաւորութեամբ, ուղեւորուեցան Ազատութեան հրապարակ, ուր տեղի ունեցաւ տօնական համերգ մը, բազմահազար երկրպագուներու մասնակցութեամբ: Հաւաքականի առաջատար Լեւոն Արոնեան Երեւան վարչարարձին յայտարարեց. - «Մենք գնացել էինք յաղթելու ոչ միայն մեզ

համար, այլ հենց այնտեղի՝ հայութեան համար: Ես ինձ անչափ հպարտ եմ զգում, քանի որ նման հաւաքականի մի մասնիկն եմ»:

Պոլսոյ մէջ կայացած խմբային ճատրակի 40-րդ մրցաշարքին մասնակցած Հայաստանի տղամարդկանց հաւաքականի կազմի անդամներն էին՝ Լեւոն Արոնեան, Գաբրիէլ Սարգսեան, Տիգրան Լեւոնի Պետրոսեան, Վլադիմիր Յակոբեան եւ Սերգէյ Մովսիսեան: Խումբի գլխաւոր մարզիչն էր Արշակ Պետրոսեան:

ՊՈՒՏԻՆԻ ԵՐՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ «ՈՉ»-Ը

ԼՈՒՄԻՆԷ ՊԵՏՐՈՍԵԱՆ

«Ժառանգութեան» կուսակցութեան վարչութեան անդամ Կենտրոնական գրասենեակի համակարգող

Եւրասիական Միութիւնը ՌԴ նախագահ Վ. Պուտինի կողմից առաջադրուած գաղափար է, որը շատերին թւում է երկու տասնամեակ առաջ աշխարհի քարտէզից վերացած ԽՍՀՄ-ի հոգեդարձման փորձ: Թերեւս զուր՝ խորհրդային ՊԱԿ-ում ծառայած մարդը հազիւ թէ իրականութեան համարժէք ընկալման այնքան խնդիրներ ունենայ, որ կարծի, թէ այսօրուայ Եւրոպայում կամ Ասիայում հնարաւոր է ԽՍՀՄ-ի կամ դրա որեւէ նմանակի վերականգնում: ՊԱԿ-ի կազմակերպիչ սպայից շատ աւելի սպասելի է, որ առաջնաբեմի իր գործողութիւններն ու քայլերը քող ծառայեն կուլիաներում պրագմատիկ խնդիրներ լուծելու, «ծրագիր մաքսիմում» թմբեկահարելով «ծրագիր մինիմում» իրականացնելու համար:

Եւրասիական Միութեան մասին ուսու պաշտօնեաները աշխարհագրական որ լայնութիւններում էլ խօսեն, այդ վիրտուալ միութեան քանի մայրցամաք միաւորող սահմաններ էլ օդում գծեն, Եւրասիական նախաձեռնութեան էութիւնն ու մտահոգութիւնը Ղազարխանը Մոսկուայի ազդեցութեան ուղեծրում պահելն է:

Ղազարխանի նախագահ Նորսուլթան Նազարբաեւին, ում «կարմիր սուլթան» են կոչում, ԽՍՀՄ փլուզումից ի վեր հրաշալիօրէն յաջողուեց իր երկիրը բարեկեցութեան հասցնել եւ միջազգային աճող դերակատարութիւն երաշխաւորել՝ վերածելով այն Միջին Ասիայի առաջատար տէրութեան: Այսօր Ղազարխանում կան թէ՛ արեւմտեան կապիտալ եւ խոշոր ընկերութիւններ, թէ՛ ուսանական տիեզերակայան, գիտա-կրթական, մշակութային կապեր եւ թէ՛ հեռաւոր-արեւելեան հսկաների, յատկապէս Չինաստանի ընդլայնուող ազդեցութիւն:

Արեւմուտքի ներկայութիւնը Ղազարխանում Ռուսաստանին մեծ առումով չի մտահոգել, քանի որ նախադրեալ չունի ֆինանսատնտեսական հարթութիւնից դուրս գալու. Ղազարխանը թէ՛ աշխարհագրորէն, թէ՛ քաղաքակրթական պատկանելութեամբ շատ հեռու է Եւրոպայից: Մինչդեռ Չինաստանի աճող ազդեցութիւնը, միաժա-

մանակ միգրացիոն, ֆինանսատնտեսական եւ քաղաքական էքսպանսիայի տարրերով, այլ պատմութիւն է:

Եթէ Չինաստանի միայն ֆինանսատնտեսական առաջխաղացումը աֆրիկեան մայրցամաքում կարող է անհանգստացնել Եւրամիութեանը, ապա միգրացիոն ու քաղաքական ուղղութիւնների յաւելումով իրականացուող էքսպանսիան Միջին Ասիայում որքա՞ն աւելի մտահոգիչ պէտք է լինի Ռուսաստանի համար: Նման ընթացքի վերջը կարող է լինել ուղղակի Չինաստանի աշխարհագրական ընդլայնումը՝ Միջին Ասիայում երկրների համագործակցութեան ինչ-որ ֆորմատ ստեղծելով:

Բուն Ղազարխանի՝ հետզհետեւ Չինաստանի ազդեցութեան դաշտ տեղափոխուելը դեռ Ռուսաստանի կէս դժբախտութիւնն է: Ռուսաստանի ամբողջ դժբախտութիւնն այն է, որ դա ֆիզիկական կայսրութիւն է առանց հոգեւոր լիցքի, եւ ուսանական Միբերը բնակեցնող ազդեցութիւնները, իրենց փոքր կամ ընդարձակ ինքնավարութիւններով, նայում են ոչ միայն Մոսկուային: Ղազարխանում Չինաստանի ազդեցութիւնը չի կարող վաղ կամ ուշ չպրոյեկտուել ուսանական Միբերի վրայ:

Ապագայում ինչ-որ պահի ՆԱՏՕ-ի «Վանկուվերից-Վլադիվոստոկ պաշտպանական վահանի» առաջարկը կարող է փաստացի վերածուել Ռուսաստանի տարածքային ամբողջականութեան պահպանման երաշխիքի: Առայժմ տեսանելին այն է, որ պատմութիւնը կրկնում է: Ինչպէս նոր հազարամեակի առաջին տասնամեակում Ռուսաստանը հեռացաւ Եւրոպայից, եւ ՌԴ եւրոպական սահմանի ամբողջ երկայնքով հաստատուեց ՆԱՏՕ-ն, այնպէս էլ երկրորդ տասնամեակում ՌԴ-ն կարող է հեռանալ Միջին Ասիայից, եւ հեռաւոր-արեւելեան հսկաները ընդլայնեն ազդեցութիւնը Ռուսաստանի հարաւային սահմանի երկայնքով:

Ինչպէս անցեալ տասնամեակում Չեչնիայի պատերազմով Պուտինին յաջողուեց ուսաստանցիներին հզորութեան իմիտացիա ներշնչել եւ Եւրոպայում առյաւեւ ազդեցութիւն կորցնելը ուսուսարակութեան համար զգալիօրէն աննկատ անցաւ, այնպէս էլ հիմա՝ Եւրասիական Միութեան նախա-

ձեռնութեամբ եւ իմիտացիոն զարգացումներով Միջին Ասիայի համար պայքարելու, իսկ չյաջողելու դէպքում՝ ուսուսարակութեան համար գոնէ անցաւ ու աննկատ նահանջելու խնդիր կը լուծուի: Կեցուածքով արդիւնք փոխհատուցել Պուտինին ակնյայտ յաջողում է:

Հրաշալիօրէն հասկանալով խաղը՝ առաջին խոչընդոտն ու բարդութիւնը Եւրասիական Միութեան ճանապարհին ստեղծում է հենց Ղազարխանը: Նազարբաեւը սպառնիչ յստակութեամբ յայտարարել է, որ Եւրասիական Միութիւնը միայն տնտեսական համագործակցութեան ձեւաչափ է, որը չի կարող եւ չի հետապնդում քաղաքական միաւորման նպատակ: Յանուն Ղազարխանի ներգրաւման ստեղծուող կառուցում դժուար է Ղազարխանի դիրքորոշմանը հակադրուել:

Եւրասիական քաղաքական միաւորում ձեւաւորելու յաւանութիւնների համար Ղազարխանի անհամաձայնութիւնը գրեթէ ֆիտակալ է նշանակում: Այս առումով Ռուսաստանը հազիւ թէ իլիւզիաներ տածի: Ներկայում այն աւելի շուտ տարածում է իլիւզիաներ՝ հանելու համար հոգեբանական ճնշման եւ էֆֆեկտի այն երկրներում, որոնց կը ցանկանար տեսնել Եւրասիական Միութիւնում:

Թերեւս ուսանական քարոզչութիւնը հենց այդ նպատակն էլ հետապնդում էր անցնող Յուլիս-Օգոստոսին, երբ նախ մի քանի բարձրաստիճան ուսուսարներ այցելեցին Հայաստան եւ յայտարարութիւններ արեցին Եւրասիական Միութեան մասին, այնուհետ ՀՀ նախագահի 8.08.2012-ին ծրագրուած մոսկովեան այցի նախօրէին ուսանական ՉԼՄ-ները անվերջ եւ յամառօրէն հաղորդեցին Եւրասիական Միութեանը անդամակցելու Հայաստանի սկզբունքային համաձայնութեան մասին, որը յայտարարուելու էր նախագահների հանդիպմանը:

Հայաստանը Եւրասիական Միութեան նախատիպ ծառայող Մաքսային միութեան երկրներից (ՌԴ-Բելառուս-Ղազարխան) ոչ մէկի հետ չունի սահման, հետեւաբար Հայաստանի ներգրաւումը

այդ մաքսային ակումբի մէջ դեֆակտո կը նշանակէր քաղաքական երեւոյթի հաղորդել տնտեսական կառուցիչն՝ առերեւոյթ հակակշռելով քաղաքական միաւորմանն ասուած Ղազարխանի «ոչ»-ը:

Օգոստոսի 8-ին ՀՀ նախագահի այցը Մոսկուա իհարկէ կայացաւ: Կրեմլից եւ ՀՀ նախագահի աշխատակազմից տարածուեցին մամուլ հաղորդագրութիւններ, նույնիսկ տրուեց համատեղ մամուլի ասուլիս, բայց՝ ինչպէս եւ պէտք էր սպասել, ի հեճուկա ՉԼՄ-ների բարձրացրած ողջ ժխտրի, Եւրասիական Միութեան յիշատակութիւն չեղաւ: Նոյնիսկ յայտնի չհարձաւ՝ թեման քննարկուե՞լ է նախագահների հանդիպմանը, թէ ոչ:

Եթէ քննարկուել է, ապա ակնյայտօրէն Հայաստանը տեղի չի տուել Եւրասիական Միութեանը անդամակցելու Մոսկուայի յորդորներին եւ ճնշումներին, ինչպէս 2008-ի ուսուսարական ուղեգրական բախումից յետոյ տեղի չտուեց Աբխազիայի եւ Հարաւային Օսիայի անկախութիւնը ճանաչելու ուսանական պահանջներին: Այն ժամանակ Հայաստանը փաստարկել էր, թէ ինքը չի ճանաչել անգամ Լեւոնային Ղարաբաղի անկախութիւնը (հայկական անկախ, որն անջատուել է Ադրբեյջանից եւ անկախութիւն է յայտատարել աւելի քան 20 տարի առաջ): Այժմ Հայաստանը փաստարկում է, թէ չունի ընդհանուր սահման Մաքսային Միութեան երկրների հետ, որոնց շուրջ ձեւաւորում է Եւրասիական Միութիւնը:

Փաստարկները իրականութեան մեկնաբանութիւն են, բայց դրանք նաեւ կամքի արտայայտութիւն են: Թերեւս Հայաստանի այդ կամքը տեսանելի է եղել եւ դրա շնորհիւ էլ նուազեց աղմուկը Պուտինի Եւրասիական նախաձեռնութեանը Հայաստանի միանալու շուրջ: Աւելին, դեռ ամուսն սկզբին յայտարարուել էր, որ Սեպտեմբերին նախագահ Պուտինը պաշտօնական այցով ժամանելու է Հայաստան: Բայց Սեպտեմբերը եկաւ՝ բերելով այլ նորութիւն. Սեպտեմբերի 5-6-ը ՆԱՏՕ-ի գլխաւոր քարտուղարը ժամանեց Հայաստան. սիմվոլիզմ, որ ինքնին խօսուն է:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048	805 East Broadway Glendale, CA 91205	300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
---	---	--

- Life Insurance
- Health Insurance
- Group & Individual
- Long Term Care
- Disability
- Estate Planning
- Will & Living Trust
- Full Annual Review
- Mortgage Protection
- College Planning
- Workman's Compensation
- Employee Benefits
- Annuity
- IRA
- 401K & 403B

A.B.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԻՆՉՊԻՍԻ ԱԶԳ ԵՆՔ

ՅԱՐՈՒԹ ՏԷՐ ԴԱԻԹԵԱՆ

Ազգերու պատմութեան մէջ կը պատահին դէպքեր, որոնք անկիւնադարձային նշանակութիւն կ'ունենան, չեղաշրջելով տուեալ ազգի մարդկանց մտայնութիւններն ու կեանքերը: Արցախեան շարժումն ու Հայաստանի անկախացումը այդպիսի ճակատագրական տարողութիւն ունեցող դէպքեր են, որոնց ակնատեսներն ու մասնակիցներն ենք ազգովին: Չենք խորհիր, որ անցնող աւելի քան երկու տասնամեակներու ընթացքին, աշխարհի վրայ կար հայ մը, որու մտածելակերպը չազդուեցաւ այս երկու նուաճումներէն, սկզբնական շրջանի խանդավառութիւնէն մինչեւ ներկայի մտահոգիչ վիճակը: Ու մեր այսօրուան մտահոգիչ վիճակն է, որ մեզ կը մղէ լուծումներու որոնման եւ առաջին հերթին հարց տալու թէ ի՞նչպիսի ազգ ենք: Պիտի կարենա՞նք ամրապնդել մեր այս նուաճումները, թէ անգամ մը եւս ձեռքէ պիտի տանք գանոնք: Այն ինչի որ ակնատես կ'ըլլանք երկու տասնամեակներէ ի վեր, դժբախտաբար մեզ չի յուսադրէր, որ ճիշտ ուղիի վրայ ենք: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր համոզումով, ազգ մը իր ապագան կը կերտէ իր իտէլաներու պատկերով: Եւ նկատելով, որ ազգ եւ պետութիւն կերտելու եւ զարգացնելու իտէլաները, դժբախտաբար մեր ժողովուրդի մտածելակերպին մէջ առաջնահերթութիւն չեն, հետեւաբար իրաւունք ունինք մտահոգուելու: Բացատրենք մի քանի օրինակներով, թէ ի՞նչ են մեր մտահոգութեանց տուն տուող գլխաւոր պատճառները:

Ընտանիք եւ Ազգ

1934ին Շահան Շահնուր կը հրատարակէր «Ազատն Կոմիտաս» յօդուածը, ուր կ'ըսէր. «Եթէ աչքի առջեւ ունենանք սա յառաջատուութիւնը- անհատ, ընտանիք, ազգ, մարդկութիւն- կը տեսնենք որ Հայը կեցած է երկրորդ հանգրուանին: Այսօր կան տարանջատ ընտանիքներ, բայց դեռ չկայ Ազգն Հայոց»: Որքա՞ն այժմէական կը հնչէ այս միտքը, հակառակ մօտ 80 տարիներու հեռավորութեան: Եթէ 1920-1930-ական թուականներուն դժուար էր ակնկալել, որ իրենց օրապահիկի

եւ գոյատեւութեան պայքարով կլանուած Եղեռնէն վերապրած ու տեղահանուած սերունդները, հասկնային Շահնուրի ախտաճանաչման տարողութիւնը. եթէ նոյն տարիներուն, փորձենք հասկնալ եկեղեցիներու, կուսակցութիւններու եւ այլ կազմակերպութիւններու իրենց ազդեցութեան գօտին ժողովուրդին վրայ տարածելու մարմաջին հետամուտ գործունէութիւնը, ապա ինչպէ՞ս արդարացնել անցնող տասնամեակներու եւ մանաւանդ Հայաստանի անկախացումէն ի վեր, բացայայտ պակասը Ազգն Հայոց գաղափարի, ազգային շահի եւ ազգասիրական գիտակցութեան: Այդ տարիներու տիրու պատկերները բան մը չի փոխեցիր մեր մտածելակերպին մէջ, որ կը շարունակենք ընթանալ նոյն ճանապարհով: Հասնելու համար ու՞ր: Նոյն պատակուած վիճակի՞ն: Այո՛: Շահնուր իրաւացի է նոյնիսկ այսօր, ի տես սակաւթիւ օլիգարխընտանիքներու աւատապետական, ազգասիրական գիտակցութիւնէ գուրկ, ազգաբանդ գործունէութեան: Շահնուր իրաւացի է նոյնիսկ այսօր, ի տես հայրենի երկրի հարստութիւնները կեղեքող ընչաքաղձ, վաշխառու ղեկավարներու: Շահնուր իրաւացի է նոյնիսկ այսօր, ի տես ազգային-պետական թանգարաններէ ու հաստատութիւններէ անհետացող ազգային գանձերու, որոնք վստահաբար կ'երթան անհատներու տուները զարդարելու: Շահնուր իրաւացի է նոյնիսկ այսօր, ի տես համատարած խարդախութիւններով իրենց լուծը ժողովուրդին վրայ պարտադրող բռնապետերու, ի հեճուկս ժողովուրդի զարգացման:

Անճնական Օրինակով Առաջնորդութիւն

Շատ բնական է, որ մարդ արարածը, մանաւանդ կանուխ տարիքին, իր ինքնութիւնը կը կազմաւորէ ու կը հետեւի այն մարդոց, գործնք կ'ընտրէ որպէս օրինակելի տիպարներ իր կեանքին: Անոնց վարուելակերպը բնագործէն կ'ամրապնդուի իր ենթագիտակցութեան մէջ: Ու սակաւթիւ են անոնք, որոնց կը յաջողուի

գիտակցական տարիքի մէջ ձեռքել եւ դուրս գալ իրենց բնական թուացող այդ ինքնութեան սահմաններէն, մշակելով իրենց ինքնութիւնը անհատականութիւնները: Ասկէ մեկնած, երբ կը նայինք մեր շուրջը եւ կը տեսնենք մեր ինքնութեան խարիսխ հանդիսացող հայրենի հողի ու հայրենի պետութեան ղեկավարներու վարուելակերպը, ինչպէ՞ս կրնանք չյուսախաբուիլ ու չմտահոգուիլ ի տես անոնց այսպանելի ընթացքին: Այսօր դժբախտաբար, գէթ մեր սերունդի մարդոց համար, որոնք սփիւռքեան ափերուն դաստիարակուեցան իտէլական հայրենիքի մտապատկերով ու խորենացիի աւանդած հայ ազգային արժանիքներու եւ նկարագրային գծերու յատկանիշերով, ահաւոր փլուզում մը կ'ապրինք մեր հոգիներուն մէջ, ի տես վատնուող այն առիթներուն, որոնց իրագործումով կրնայինք իրականացնել մեր շատ մը իտէլաներն ու անկատար տեսչերը: Ի՞նչպէս չյուսախաբուիլ ի տես Արցախի զաւակ ղեկավարներու, առաջնորդութեամբ Ռ. Քոչարեան-Ս. Սարգսեան գոյգին, չարաշահումներուն եւ անհաշիւ հարստացման, ի հեճուկս նոյնինքն Արցախի տկարացման: Անոնց հարստահարած բազմահարիւր միլիոններով կարելի չէ՞ր գէթ մասամբ վերաբնակեցնել Արցախը եւ ամրապնդել մեր դիրքը: Ի՞նչպէս չյուսախաբուիլ ի տես 1988ի ահաւոր երկրաշարժէն գրեթէ 24 տարիներ ետք, մօտ 6000 ընտանիքներու ժամանակաւոր տնակներու մէջ տուայտման, երբ նոյն շրջանի քաղաքապետը տիրացած է անհաշիւ հարստութեանց եւ իր սանձարձակութիւններով քաղաքէն եւ երկրէն դուրս կը վանէ քաղաքացիները: Դժբախտաբար կարելի է այս շարքը շատ երկարել, նշելով շատ մը օլիգարխներու անմարդկային արարքները, հասնելով մինչեւ Հարմաքար եւ Ռուբէն Հայրապետեան: Ի՞նչպիսի ապագայ կարելի է սպասել Հայաստանի վերնախաւին տիրացած այսպիսիներու առաջնորդութիւնէն: Մտահոգիչ չէ՞:

Բարցրացի Բարցրացուր

Ահաւասիկ չար չրկուած նշանաբան մը եւս, զոր յաճախակի օրէն կը կրկնենք եւ ոչ միայն չենք գործադրէր, այլ հակառակին ալ ատակ ենք: Մեր մէջ նախանձն ու անվստահութիւնը այնքան արմատացած է, որ պաշտօնի հասնելու

համար կ'ոտնակոխենք ամէն իտէլ ու հասնելէ ետք ալ կ'ոտնակոխենք մեր ստորագրասները, գանոնք նկատելով որպէս սպառնալիք մեր դիրքին: Այնքան կլանուած ենք մեր անձնական ու հատուածական շահերով, որ արգելք կը հանդիսանանք մեր եւ մեր շրջապատի զարգացման ու հետեւաբար մեր ազգային յառաջընթացին: Հայաստանի օլիգարխներն ու իրենց մենաշնորհները դասական մէկ օրինակը չէ՞ն այս ախտին: Իր օրով, խորենացի իսկ հալածուեցաւ շրջապատի վերնախաւէն, ու թերեւ Պատմահայր չղաւնար, եթէ Սահակ Բագրատունի մը առիթը ընծայած չըլլար իրեն, կերտելու Հայոց Պատմութիւնը, որ որպէս դասագիրք, 1400 տարիներու վրայ սերունդներ դաստիարակեց հայկական ինքնութեամբ: Արդեօք քանի՞ քանի՞ շնորհալի տաղանդներու երկունքը վիժեցաւ ու տակաւին կը վիժի այս մտայնութեան պատճառաւ: Ո՞ւր են այսօրուան Սահակ Բագրատունիները: Դժբախտաբար մենք այնքա՞ն կլանուած ենք մեր անձնական շահերով, որ մտահան կ'ընենք թէ երբ կ'առաջնորդուինք ճանաչել գիմաստութիւն եւ խրատ, իմանալ զբանս հանձարոյց նշանաբանով, մենք կը յառաջդիմենք: Բայց երբ «ուր հաց, հոն կաց» նշանաբանը կ'որդեգրենք որպէս վարզագիծ, պարզապէս գոյուցութիւն մը քարշ կուտանք, մսխելով անցեալէն ժառանգուած դրամագլուխը: Ինչո՞ւ կը դժուարանանք գիտակցիլ այս իրականութեան եւ միշտ անմիջական եւ դիւրին պատառի տեսքը մեզ ետ կը վանէ ու կը գրկէ ճաշ պատրաստելու եւ զայն ըմբռնելու գոհունակութիւնէն: Ինչո՞ւ մէկ օրուան համար քանի մը հազար դրամ կաշառքի խայծը, կը մթազն մեր դատողութիւնը, ու մենք կ'ընտրենք առաջնորդներ, որոնք մեզ կը կեղեքեն իրենց պաշտօնավարութեան հինգ տարիներու ընթացքին: Մտահոգուելու իրաւունք չունինք:

Ո՞ր օրուան կը սպասենք գիտակցելու, որ ազգովին վայրէջքի մէջ ենք եւ այս ընթացքով հակամէտ ենք ենթարկուելու նոր աղէտներու: Ի՞նչպիսի ազգ ենք, որ հակառակ հազարաւոր տարիներու մեր պատմութեան, կը թերանանք դասեր քաղել հոնկէ, յօգուտ մեր ազգի յառաջդիմութեան: Ինչո՞ւ համար երբ դժուարութեանց եւ մարտա-

Շարք էջ 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻԻՆԵՐՈՒ ՄԱՍԻՍ

ՏԵՍԱԵՐԻԶԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Հովանաւորութեամբ՝ Ա.Դ.Յ.Կ. 125 Ամեակի Յորելիմական Մարմնի
 Կազմակերպութեամբ՝ Ա.Դ.Յ.Կ. Փարամազ Մասնաճիւղի
 Խօսք կ'առնէ՝ Տօք. Եղիկ Ծերեճեան

Տեղի կ'ունենայ՝ Հինգշաբթի 27 Սեպտեմբեր, 2012
 երեկոյեան ժամը 8:00-ին
 Հ.Կ.Բ.Մ.-ի Կարօ Սողանալեան սրահէն ներս՝
 1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104

ՄՈՒՏՔԸ ԱԶՍ

ԱՐԴԵՕՔ ՍԻՐԻԱՅԱՅԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՄՆ ԱՅՆ ՍԻՐԻԱ, ՈՐՏԵՂԻՑ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ

ՍԱՄՈՒՆԷՂ ԿՈՍԵԱՆ

2012-ի ամառն էլ վերջացաւ: Արձակուրդներին յաջորդող ժամանակահատուածն ընդունուած է առաւել գործնական համարել, առաւել նպաստաւոր՝ նոր թռիչքների համար: Թէ որքանով կը յաջողուի ծրագրուած մտայղացումներն իրականացնել՝ գնահատականը ժամանակինն է: Իսկ 2012-ի ամառը, յատկապէս Օգոստոսը, նշանակալից էր Անգլիայում կայացած 30-րդ օլիմպիական խաղերով: Յաւոք, օլիմպիական կարգախօսը՝ մրցումների օրերին դադարեցնել ամէն տիպի ռազմական գործողութիւնները, Սիրիայում իր արձագանքը չգտաւ: Այստեղ ոչ միայն չդադարեցին իշխանական ուժերի եւ ընդդիմադիրների առճակատումները, այլեւ առաւել անհանդուրժողական դարձան՝ ներառելով երկրի համար տարածքը: Մեզ համար առաւել մտահոգիչը հայաշատ Հայկազից ստացուող հաղորդագրութիւններն էին ու են՝ կապուած մեր հայրենակիցների անվտանգութեան հետ: Այսօր բազմաթիւ սիրիահայեր են Հայաստանում, աւելի շատ՝ երեխաներ: Նրանցից շատերն սպասում են ռազմական գործողութիւնների աւարտին, որպէսզի իրենց տները վերադառնան: Որ մի օր այնտեղ էլ խաղաղութիւն կը լինի, կասկածից վեր է, կասկածելի է միայն խաղաղութեան ճշգրիտ օրը, եւ արդեօք մեր հայրենակիցները կը վերադառնա՞ն այն Սիրիա, որտեղից դուրս են եկել: Այսօր Արեւմուտքը, երկու ոտքը մի կօշիկի մէջ, պահանջում է Ասատի հրաժարականը: Յանուն դրա գինում ու ֆինանսաւորում են ընդդիմադիրներին, հազար ու մի

պատժամիջոց ու սցենար են մշակում եւ իրենց նպատակին հասնելու համար կարծես այնքան էլ մտահոգուած չեն այդ երկրի ու նրա ժողովրդի ճակատագրով: Ամերիկեան ժողովրդավարութեան մոտեցի նախորդ պատուաստումները՝ իրաքում, Աֆղանստանում, Լիպիայում եւ այլն, այդպէս էլ ընձիւղներ չտուեցին, եւ ամենայն հաւանականութեամբ, սիրիական իրականութիւնն էլ՝ ազգային առանձնապատկերներէն ինքնուրուշ, շատ ուշ կամ ընդհանրապէս չի կարողանալու իր արեան ընթացքին յարմարեցնել ժողովրդավարութեան թելադրած օտար ազդակները: Սակայն ժողովրդավարութեան տարածման Արեւմուտքի խաչակրաց արշաւանքի հրամանատարներին կարծես այնքան էլ ժողովրդավարական չի թւում այդ մասին խորհելը:

Չպիտի՞ լինի կազաֆին, ուրեմն չպիտի՞ լինի, խանգարու՞մ է Ասատը, ուրեմն պիտի՞ հրաժարական տայ... Ազգերի Ալիեւը, նախատուարներով Հունգարիայից գնելով իր մարդասպան ազգային հերոսին, հաստատեց անառարկելին. այս աշխարհում ամէն ինչ վաճառու է, անգամ Արեւմուտքի կողմից սրբացուած ժողովրդավարութիւնը: Ալիեւն, իհարկէ, ցնծում է՝ մոռանալով էականը... Նոյն Արեւմուտքը փակում է աչքերը, քանի դեռ ալիեւեան քաղաքագործութիւններն իր երկրի սահմանների ներսում են: Սակայն նոյն նախատուարները Ալիեւի ախորժակը տարածում են նաեւ երկրի սահմաններից դուրս, եւ շատ հաւանական է, որ Արեւմուտքի համար Ասատից

Շար.ը էջ 18

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՊԱՅՐ ԹԵԼԱԴՐՈՒՄ Ե Հայաստանի ստեղծագործական միութիւնների յայտարարութիւնը

Վերջին մի քանի օրերի աննախադէպ իրադարձութիւնները՝ ոճրագործ Ռ. Սաֆարովի փաստացի արդարացումն ու խրախուսանքը պաշտօնական Ատրպէյճանի կողմից, որ տեղի ունեցաւ հունգարական իշխանութիւնների ակնյայտ մեղաւորութեամբ, մօտեցրել են մեզ մի սահմանագծի, որը կարելի է անուանել ճշմարտութեան պահ:

Նախ եւ առաջ այդ պահը բնութագրում է Ատրպէյճանին՝ 1988-ի Սոսմկայիթեան եղեռնագործութիւնից մինչեւ այսօր, որպէս մի պետութեան, որի քաղաքակրթական նկարագիրը... կացինն է: Ողջամիտ երկիւստութեան եւ փոխզինումների ճանապարհով դարբանեան հարցի կարգաւորմանը հասնելու, այդ ուղղութեամբ ՀՀ իշխանութիւնների եւ այլ երկրների գործադրած ջանքերը գալիս-բախուում են այդ կացնային փակուղուն:

Յաջորդը, որ դարձեալ վերաբերում է ճշմարտութեան պահին, միջազգային քաղաքական հանրութեան՝ մինչ այժմ որդեգրած «հաւասարակշիռ դիրքորոշումն» է, որի սկզբունքային փոփոխութիւնները միայն կարող է դուրս բերել մեր տարածաշրջանը փակուղուց:

Այդպիսի փոփոխութեան անհրաժեշտութիւնը հաստատեց է: Արցախի ինքնորոշման իրաւունքը՝ առանց սահմանափակող ձեւակերպումների, պէտք է ճանաչուի ու երաշխաւորուի այդ հանրութեան անդամների կողմից: Երկակի ստանդարտների քաղաքականութիւնը ոչ՝ միայն նորա նոր յանցագործութիւնների ու սադրանքների է մղելու Ատրպէյճանին, այլ շարունակելու է հիասթափեցնել մեր ժողովրդին՝ անվստահութեան սեր-

մեր ցանելով միջազգային կառույցների եւ գործընկեր պետութիւնների հետ նրա յարաբերութիւններում:

Մինչդեռ նոյնիսկ փակ աչքերով ապրող մարդկանց համար տեսանելի է, որ Արցախի ժողովուրդը չի կարող «ինքնավարուել» հայաստանութիւնը քաջալերող պետութեան կազմում: Ժամանակն է մինչեւ վերջ ձերբազատուել ստալինեան ծանր ժառանգութիւնից, ընդունելով իր ազատութիւնն ու ժողովրդավարական ճանապարհը կառուցող ԼՂՀ սուվերեն գոյութիւնը՝ արմատական վերափոխութիւնների ենթարկուած մեր աշխարհում:

Այսպիսի արդարացի դիրքորոշման համատեքստում մենք գնահատանքի խօսք ենք յղում բոլոր այն երկրներին, գործիչներին ու մտաւորականներին, ում քաղաքական եւ մարդկային խիղճը առանց յապաղումների արձագանքեց օրերս տեղի ունեցած աններելի իրադարձութիւններին:

Հայաստանի ստեղծագործական միութիւնները, վճռական եւ պատասխանատու քայլեր պահանջող այս իրավիճակում գորակցելով ՀՀ նախագահի գործողութիւններին, ակնկալում են, որ Հայաստանի իշխանութիւնները հետամուտ կը լինեն ԼՂՀ անկախութեան ճանաչմանը:

Այս հանգրուանում մեր ժողովրդին անհրաժեշտ համախմբուածութեան հրամայականը նկատի ունենալով՝ յոյս ենք յայտնում, որ ազգային-հասարակական կեանքը ձեւաւորող բոլոր ուժերը կը կարողանան վերականգնել ներքաղաքական տարածաշրջաններից՝ ի նպաստ մեր կենսական շահերի:



ՀԵՌԱՏԵՍ ԽԻՉԱԽ ՅԱՆՁՆԱՌՈՒ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ
SOCIAL DEMOCRAT HUNCHAKIAN PARTY

Ճաշկերոյթ Պարահանդէս եւ Ազգային Երգերու Երեկոյ
 Նոյիրում Ս.Դ.Հ.Կ.ի 125 Ամեակին
DINNER DANCE & PATRIOTIC SONGS
 DEDICATED TO 125th ANNIVERSARY Of S.D.H.P.

Կազմակերպութեամբ՝ ԿԱՅԾ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
 PRESENTED BY GAYDZ YOUTH ORGANIZATION

Մասնակցութեամբ՝ Լոնտոնէն Սիրում Երգիչ
 եւ ազգային երգերու մեկնաբան՝
SAMVEL VARDANIAN
 SPECIAL GUEST SINGER
 From London

Սամուէլ Վարդանեանի

Տեղի կ'ունենայ Շաբաթ, Սեպտեմբեր 22, 2012
Արշակ յաճախած է նաեւ Ազգային Կեդրոնական վարժարանը, որ 1895ին կիսատ ձգելով մտած է կեանքի ասպարէզ: Խորթ թուած է իրեն առեւտրական գործը եւ այդ իսկ պատճառով մտած է «Բիւզանդիոն» օրաթերթի (հիմնուած՝ Նոյեմբեր 4, 1896ին) խմբագրութեան մէջ իբրեւ վարչական պաշտօնեայ՝ խմբագրապետ Բիւզանդ Քէչեանի վերահսկողութեան տակ: Գրական ասպարէզ կը մտնէ 1897ին՝ տպագրելով յօդուածներ «Բիւզանդիոն» օրաթերթին մէջ, որ լոյս կը տեսնէր երեկոյեան: Հանդէս կը գայ «Ս. Անգեղացի» եւ «Շաւարշ» ծածկանուններով՝ «Հանդէս Ամսօրեայ», «Կոչնակ», «Բիւրակն», «Մասիս», «Ծաղիկ», «Սուրհանդակ» եւ այլ պարբերականներու մէջ: Այդ օրերուն, կը գործակցի Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյց»ներուն մանաւանդ՝ 1920-1922 տարիներուն: Հրատարակագրական իր աշխատանքներուն համար երկու անգամ «Միւտիւրիէթ» (ոստիկանութիւն) տարուելով հարցաքննուած է:

1910ին ընտրուած է երեսփոխան Պոլսոյ Ազգային ժողովին: Երկրորդ անգամ ընտրուած է նոյն պաշտօնին՝ 1922ին:

Մտած է Պոլսոյ Ազգային Պատրիարքարան 1910ին եւ որպէս դիւանի տնօրէն պաշտօնավարած՝ մինչեւ 1922 թուականը: Ան, Նոյեմբերին, քեմալականներու Պոլիս մուտքէն առաջ հեռացած է Պոլիսէն ու անցած՝ Սելանիկ, ուր մնացած է ժամանակ մը, ապա Աթէնք եւ հոնկէ անցած՝ հազարաւոր որբերու հետ դէպի Գորֆու, ուր իբրեւ ուսուցիչ պաշտօն վարած՝ որբանոցներու մէջ: Որբերու ցրուածէն ետք փոխադրուեցաւ Գահիրէ:

ԳԱՀԻՐԷՆ ԿԸ ԴԱՐՁՆԷ ԻՐ ՏՈՒՆԸ

1923ին հեռանալով Յունաստանէն վերջնականապէս կը հաստատուի Գահիրէ, ուր եղած է ուսուցիչ Ազգային Գալուստեան վարժարանին (հիմնուած 1854ին) եւ ապա՝ դիւանապետ 1924-1935 տարիներուն Եգիպտոսի Հայոց Ազգային Առաջնորդարանին:

Հրատարակած է «Ազատ Միտք» (1936-1937) շաբաթաթերթը, «Գրասէրի Առաջնորդ»

(1938-1949) պարբերականը եւ Դ. Շահլամեանի հետ՝ «Կեանք եւ Գիր» (1948) տարեգիրքը: 1941ին կը հիմնէ հայ տպարան մը, որպէսզի իր հրատարակած թերթերն ու գիրքերը կարենայ տպագրել:

ՀՐԱՏԱՐԱԿԱՆ ԻՐ ԳՈՐԾԵՐԸ

Իր ողջութեան ընկեր Արշակ Ալպոյաճեան հրատարակած է 22 արժէքաւոր աշխատասիրութիւններ, որոնք անկասկած արդիւնք են իր ջանասիրութեան եւ վաստակին: Հայ բանասիրութեան մէջ ան ծանօթ է ազգային ակնաւոր գործիչներու կեանքին ու գործունէութեան նուիրուած մեծարժէք գործերով: Ստորեւ կը ներկայացնենք հրատարակած իր գիրքերուն ցանկը:

Կենսագրած է «Ուսումնասիրութիւն Սրբուհի Տիւսաբ»ի (1901 - Վենետիկ), «Գրիգոր Զօհրայ» (մեծագիր 350 էջ - 1919 - Կ. Պոլիս), «Գրիգոր Կեսարացի պատրիարք եւ իր ժամանակը» (1936 - Երուսաղէմ), «Թորոմ պատրիարք Գուշակեան» (1940 - Գահիրէ), «Հայ եպիսկոպոսի մը առաքելութիւնը ի Հայկեջիտան ժի դարուն» (1946), «Մինաս Չերազ» (1927 - Գահիրէ): Մամուլի մէջ հրատարակած է «Անհետացող դէմքեր», որ իր ժամանակաշրջանի հայ մշակոյթի նշանաւոր գործիչներու վերաբերեալ առանձին հանրագիտարան է:

Հայագիտութեան բնագաւառին մէջ Ալպոյաճեանի մեծագոյն ներդրումը կ'ըլլայ հայ գաղթավայրերու պատմութեան նուիրուած մեծածաւալ գործերը: Այդ ուսումնասիրութիւններէն առաջինը՝ «Հայք ի Ռուսի» (անտիպ), որ 1905ին արժանացեր է Իզմիրլեան գրական մրցանակին: Այնուհետեւ, լոյս տեսան իր «Պատմութիւն հայ Կեսարիոյ» երկու հատորով (1937), «Պատմութիւն Եւրոպիոյ հայոց» (1952), «Արաբական Միացեալ Հանրապետութեան Եգիպտոսի նահանգը եւ հայերը» (1960), «Պատմութիւն Մալթիոյ հայոց» (1961), «Յուշամատենան Կուտիւնահայերու» (1961) աշխատութիւնները: Այս գործերու մէջ կ'ընդգրկուին համապատասխան շրջանի աշխարհագրութիւնը, մշակոյթը, հասարակական եւ տնտեսական կեանքը, հայերու տեղահանման եւ աշխարհով մէկ սփռուելու պատմութիւնը եւ բազմաթիւ անուանի մարդոց կենսագրութիւնները: Նշենք որ հրատարակած է նաեւ «Պուլկարաց պատմութիւն» (1910 - Վառնա), «Յաւիտենական Երուսաղէմ» եւ Ֆրանսերէն լեզուով՝ "Les Armeniens et l'Imprimerie" հայ տպագրութեան 100ամեակին նուիրուած գիրքը (70 էջ):

Ալպոյաճեան գրած է նաեւ հայկական գաղթավայրերու առաջին ամբողջական պատմութիւնը՝ «Պատմութիւն հայ գաղթականութեան» երեք հատորներով (առաջինը՝ 1941ին, երկրորդը՝ 1955ին, երրորդը՝ 1961ին - Գահիրէ), չորրորդը՝ անտիպ (1941-1961): Ան գրած է նաեւ հայ դպրոցի լիակատար պատմութիւն ստեղծելու հիմքը՝ «Պատմութիւն հայ դպրոցի» առաջին հատոր, երկրորդը՝ ձեռագիր վիճակի մէջ է տակաւին (1946):

Լոյս տեսած կարեւոր աշխատասիրութիւններ են «Ընդարձակ օրացոյց Ս. Փրկչեան հիւանդանոցի

հայոց 1908, 1909 եւ 1910» (Կ. Պոլիս), «Օսմանեան կայսրութեան Սահմանադրութիւնը», «Քննական ակնարկներ»: Իր հեղինակութեամբ լոյս կը տեսնէ նաեւ «Պատմութիւն հայ Կեսարիոյ» երկու ստուար հատորներով գործը, 2000 էջերէ բաղկացած (1937 - Գահիրէ):

Ան եղաւ առաջին հեղինակը, որ կազմեց Հայաստանի պատմական աշխարհագրութիւնը հասցնելով՝ հնագիտութիւնը մինչեւ մեր օրերը:

Ըսենք որ Ալպոյաճեան հեռու մնալով հանդերձ Գահիրէի առանձնաշնորհեալ բարձր խաւի այդ դասակարգի մարդոցմէն, պահելով իր գիտական կեանքի լայն հետաքրքրութիւններն ու մնալով այդ իր ստեղծած աշխարհին մէջ, իր աշխատութիւններու հրատարակութեան մեծ մասին համար, դիմած է սփիւռքահայ բարերարներու նիւթական աջակցութեան:

ԱՆՏԻՊ ԳՈՐԾԵՐԸ

Ընկեր Արշակ Ալպոյաճեանի մահէն յետոյ, շնորհիւ «Արեւ» օրաթերթի խմբագիր ընկեր Երուանդ Ազատեանի գործնական ու անձնական միջամտութեան իր գրողարանը, դիւանը եւ արխիւային հաւաքածոն, պատրաստուած մասնաւոր անտուկներով, Աղեքսանդրիոյ վրայով, այդ օրերուն տեղի ունեցող ներգաղթի շարժումին հետ նաւով, կը տեղափոխուի Հայաստան եւ կը պահուի Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանին մէջ: Անոր ձեռագիրներուն մէջ կան շատ կարեւոր ուսումնասիրութիւններ եւ անտիպ գործեր, որոնք կը սպասեն հրատարակուի:

րակութեան: Յիշենք անոնցմէ.

«Հայերը Բիւզանդական երկիրներու մէջ», «Իրանի հայերը», «Պաղտատի հայերը», «Կիպրահայ գաղութը», «Պրուսայի հայերը», «Տրապիզոնի հայերը», «Սպանիա եւ հայերը», «Ամերիկա եւ հայերը», «Պատմութիւն Սուրբ Փրկչեան Ազգային Հիւանդանոցի 100ամեակին առթիւ», «Տպագրութեան արուեստը ի հայտ», «Հայ եւ թուրք յարաբերութիւնները», «Պատմութիւն հայ ազատագրութեան», «Պատմութիւն հայ տպագրութեան», «Ժամանակակից պատմութիւն հայոց», «Կարապետ Փանոսեանի կեանքն ու գործը», «Կարապետ Իւթիւնեանի կեանքն ու գործը», «Արմենակ Հայկունիի կեանքն ու գործը», «Յիշատակներ»:

1955ին կ'ընտրուի պատուիրակ էջմիածնի կաթողիկոսական ընտրութեան ներկայացնելու Եգիպտոսի թեմը: Վազգէն Ա. Պալմեան կ'ընտրուի Ամենայն Հայոց Հայրապետութեան 130րդ Կաթողիկոսը: Գէորգ Զ. Չօրեքճեան վախճանած էր 1954ին:

Դարձեալ 1955ին, ազգային եկեղեցական պայքարի ամենէն սուր օրերուն, Ալպոյաճեան կ'ընտրուի անդամ Գահիրէի Թեմական ժողովին եւ փոխ ատենապետ նոյն ժողովին:

Գնահատելով ազգին ընծայած իր օգտակար ծառայութիւնը՝ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը վարձատրած է զինք Ս. Գրիգոր Լուսաւորիչ շքանշանի Ա. աստիճանով ու շնորհած՝ մասնաւոր հայրապետական կոնդակ:

Շաբ.ք էջ 19

AGBU Asbeds cordially invite you to
"An Evening with an Ambassador"
 Speaker:
The Honorable Edward P. Djerejian

Edward P. Djerejian served in the U.S. Foreign Service for eight presidencies, from John F. Kennedy to William J. Clinton (1962-1994), as assistant secretary of state for Near Eastern affairs in both the George H.W. Bush and Clinton administrations, as well as U.S. ambassador to Israel and the Syrian Arab Republic. His book, "Danger and Opportunity: An American Ambassador's Journey Through the Middle East," was published in Sept. 2008. Djerejian has been awarded numerous honors including the Presidential Distinguished Service Award, and in 2011, was elected a fellow of the American Academy of Arts and Sciences and named to the board of trustees of the Carnegie Corporation of New York.

Friday October 5, 2012 at 7:30 pm
 AGBU Vatche & Tamar Manoukian Center
 2495 East Mountain Street
 Pasadena, CA 91104

Question-Answer session will follow the lecture.
 For more information, call: **626.794.7942**
 Or email: asbeds@agbuca.org

FREE ADMISSION

ԻՏԱԼԻԱՅԵՆ ԵՐԿՈՒ ՆՇՄԱՐ. ԿՐՆԱՂՆՔ «ՇՏԿԵԼ»

ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Տարբեր է, երբ աշխարհի հրաշալիք նկատուող կոթող մը կը դիտես մօտէն եւ իրողապէս կը զգաս քանդակին ստեղծագործական հմայքն ու անոր մշակութային եւ պատմական արժէքը: Այս զգացումը ունեցայ յուլիս 2012-ին, երբ կը դիտէի Իտալիոյ Փիզա քաղաքին նշանաւոր կոթողը՝ ծուած աշտարակը... Իր հմայքով ան իսկապէս արժանի է աշխարհի եօթը հրաշալիքներուն շարքին ըլլալու:

Բայց հետաքրքրական է հետեւիլ պատմութեան զարգացումներուն, յատկապէս եկեղեցւոյ գանձակատան (իմա՝ ծուած աշտարակին), որուն գանձակները վերցուած են՝ նուազեցնելու համար ընդհանուր ծանրութիւնը: Երկարարութիւնը սկսած է 1173-ին, երբ փոքր «ծուածութիւն» մը նշմարուեցաւ առաջին երեք յարկերու ամբողջացումէն ետք: Ծուածութեան պատճառը հողին բաղկացուցիչ մասնիկներուն տկարութիւնն է. անհրաժեշտ նկատուած է աշխատանքները կասեցնել՝ սպասելով հողին ամբողջական կազմաւորման: Կայ նաեւ պատմութեան այլ վարկած՝ գանձակատան աշխատանքներու ընդհատման: Իտալիոյ Թուսքանի շրջանը, ուր աշտարակը կը գտնուի, եղած է երկար տարիներու վրայ տեղի ունեցած պատերազմական գօտի, ուստի մարդու շինարարութեան պատճառով դանդաղած են նաեւ շինարարական աշխատանքները:

Աշտարակը ութ յարկ է՝ չիտունհինգ մեթր բարձրութեամբ, ունի 297 սանդուխ: Ծուածութիւնը, դժբախտաբար, շարունակուած է իւրաքանչիւր տարի՝ մէկ միլիոն մեթր տարողութեամբ, հակառակ այն բոլոր շինարարական փորձերուն, որոնք ի գործ դրուած են կասեցնելու շարունակուող ծուածութիւնը: Անիկա աւելի շեշտուած է 1999-2001 տարիներուն, երբ շեղումը հասած է աւելի քան հինգուկէս աստիճանի: Բարեբախտաբար, 2008 թուականին կարելի եղած է շինարարական ձեւերը գտնել եւ այսօր կարելի է ըսել, թէ աշտարակը աւելի քան երկու հարիւր տարի պիտի գոյատեւէ՝ առանց յաւելեալ ծուծու: Այսօր Փիզայի աշտարակը խրոխտ կանգնած է, թէկուզ՝ 3.99 աստիճան ծուծ, բայց՝ ապահով գալիք օրերու որեւէ փորձանքէ եւ նորանոր շեղումներէ:

Երբ կը շարունակես դիտել Փիզայի աշտարակը եւ կը սքանչա-

նաս կոթողին ստեղծագործական աշխատանքին վրայ, հակառակ քիչ մը ծուծ վիճակին, անպայման մտքիդ մէջ կամրջում մը կը կատարուի մեր հայկական իրականութիւններու տարբեր երեւոյթներու եւ այդ աշտարակին միջեւ: Երեւոյթներ՝ ազգային, քաղաքական, հասարակական եւ մշակութային տարբեր բնագաւառներու մէջ՝ հայրենիքի մէջ թէ սփիւռքի, որոնք սխալ են: Եւ այդ օր դիմաց կանգնած Փիզայի կոթողին հետ բաղդատելով՝ «ծուած» ու տակաւին «ծուող» իրականութիւններ, որոնք կը մտահոգեն եւ կը վտանգեն մեր ներազգային եւ համահայկական իրավիճակները՝ տարբեր բնագաւառներու մէջ:

Կը շարունակեմ դիտել ու հմայուել աշխարհի հրաշալիք նկատուած այդ ճարտարապետական կոթողով, միեւնոյն ատեն հարց տալով. «Արդեօք հա՞նր ալ չի կրնար կասեցնել իր անհատական եւ հաւաքական կեանքի ծուծութիւնը...»: Պէտք է կենալ ամուր՝ նայելով ինքնավստահութեամբ եւ վճռակամութեամբ լի վաղուան, թէկուզ՝ քիչ մը ծուած, բայց միշտ աւելի չճեղու տրամադրութեամբ: Արդեօք հայը կարողութիւնը եւ միտքը չունի՞ շտկելու այն բաները, որոնք ծուած են իր կեանքին մէջ:

Եթէ իտալիա կատարած իմ ճամբորդութեանս ընթացքին Փիզայի աշտարակը առաջին կարեւոր նշմարն էր, բայց կայ նաեւ երկրորդը, որուն եւս պէտք է նայիլ...

Մայրաքաղաք Հռոմի հայկական ներկայութեան մէջ իր կարեւոր տեղն ու իմաստը ունի Սուրբ Նիկողայոս եկեղեցին՝ կառուցուած 1602 թուականին: Անոր կողքին կայ Լեւոնեան վարժարանը՝ 1883 թուականին կառուցուած, եւ անոր կողքին կանգնած խաչքարը՝ ի յիշատակ Հայոց ցեղասպանութեան նահատակներու: Երեք կոթողներ՝ քով քովի կանգնած, կը վկայեն հայուն վերապրումին ու շարունակականութեան ուղիներուն մասին, հայուն կեանքի նպատակակէտէն «չշեղելու» ու «չճեղելու» անհրաժեշտութեան մասին:

Հայ եկեղեցին Հռոմի մէջ կերտած իր աւելի քան 410 տարիներու պատմութեամբ տակաւին ամբողջ է քրիստոնէական եւ ազգային հաւատքին ու աւանդին: Իսկ Լեւոնեան վարժարանը՝ իր աւելի քան 130 տարիներու ծառայութեամբ տակաւին կը շարունակէ

մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի կարեւոր առաքելութիւնները... Բայց կայ նաեւ խաչքար-յուշակոթողը՝ Հայ դատի ու պահանջատիրական ուղիին վրայ հայը միշտ զգաստ պահելու կոչով մը: Այս երեք կոթողները միասնաբար մէկ վկայութիւն կը կազմեն, ինչ որ տեսայ վարժարան Ահարոնեանին մէջ, եւ որուն հանդիպեցայ նոյնինքն Լեւոնեան վարժարանին մէջ:

Վարժարանի ծնած է Հռոմ եւ լաւ ներկայացուցիչ մըն է սփիւռքահայու, յատկապէս՝ ներկայ ժամանակներու իրականութեան: Մայրը իտալիա հաստատուած է Հայաստանէն գալով, իսկ հայրը՝ Լիպիայէն: Ան քաղաքական գիտութեան մէջ մասնագիտացած երիտասարդ մըն է, որ լաւ հայերէն կը խօսի. «Տունը հայերէն կը խօսինք, քիչ մը արեւելահայերէն, քիչ մը արեւմտահայերէն, բայց՝ հայերէն», կ'ըսէ:

Վարժարանի կ'աշխատի Լեւոնեան վարժարանին մէջ, որ ներկայիս ունի աւելի քան տասներկու աշակերտ: Անոնք կը պատրաստուին եկեղեցական առաջնորդութեան՝ հայկական տարբեր գաղութներուն մէջ ծառայելու համար: Վարժարանին աշխատանքը առաւելաբար կ'ընդգրկէ վարժարանի մատենադարանին առաքելութիւնը. այդ վայրը կարեւոր հիմք է մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի, «չծուող» դրոշմներով լի: Վարժարանին հետ գրուցելով՝ տեսայ, որ հայը կրնայ «չճեղ» իր արժէքներէն եւ աւանդէն: Վարժարան երիտասարդ հայն է, որ հաւատացած է իր ըրած աշխատանքին կարեւորութեան, բայց նաեւ՝ իր ազգային ինքնութեան եւ անոր մշակութային արժէքին:

Բայց մեր հայրենի սփիւռքեան իրականութիւններուն մէջ տակաւին կան «ծուած» եւ «ծուող» օրակարգեր:

Թէեւ հպարտ ենք անկախացած հայրենիքով եւ անոր պետականութեամբ, բայց նաեւ մտահոգ ենք անոր մէկը միւսին ետեւէն զիրար հրմշտկող «ծուած» ու մնացուն կերպով «ծուող» իրավիճակներով: Սփիւռքեան համահայկական ընդհանուր իրավիճակին մէջ եւս կան նմանօրինակ, տարբեր

տարողութեամբ, բայց «ծուծ» կամ «ծուած» իրավիճակներ:

Ինչ ձեւով ու պարունակով ալ փորձենք վեր առնել մեր հայկական համընդհանուր երեւոյթները եւ ինչ պիտի ստանալ ալ ուզենք դիտել «ծուծ» եւ «ծուած» մեր ազգային բոլոր իրականութիւնները, կը մնայ մէկ կարեւոր եւ հրատապ առաքելութիւն ու մարտահրաւիր՝ «կրնա՞նք շտկել» ծանրն ու ծուծը:

Եթէ ախտաճանաչումը առաջին կարեւոր քայլն է ծուած երեւոյթներու կասեցման, սխալներուն նկատմամբ ներողամտութիւնը երկրորդ հանգրուանն է, ուրեմն շտկելու համար պատրաստակամութիւն, հոգի ու միտք ի գործ դնելը կը կազմեն գործընթացի ամբողջականութեան հասցնող ու կարեւոր օղակը:

Եթէ պիտի կառչինք շտկելու առաքելութեան, այս կը նշանակէ, թէ պարտինք պատրաստել եւ լիցքաւորել «հողը» եւ աշխատիլ նոյնինքն հողին «կազմաւորման» ուղղութեամբ, ինչպէս եղած է Փիզայի աշտարակի պարագային:

Հայուն «հողը» կը պատրաստուի մարդակերտումի եւ հայակերտումի անհրաժեշտ գրաւականներով: Իսկ հայուն հողին կազմաւորումը կը կայանայ ազգակերտման իրականութեան մէջ: Եթէ ազգակերտումի հրամայականը հայրենի մակարդակի վրայ պիտի նշանակէր Հայաստանի հզօրացումն ու անոր պետականութեան եւ ընկերային-տնտեսական վարչաձեւի կազմաւորումը, ապա սփիւռքի մակարդակի վրայ՝ հայապահպանման մեծ, ամբողջական եւ ընդհանրական առաքելութեան կառչիլն ու անոր ի խնդիր ամէն ինչ ընելը:

Իտալիայէն երկու նշմար... Բայց մէկ մեծ ու կարեւոր աշխատանքային հրամայական՝ «կրնա՞նք շտկել»:

Եթէ Լեւոնեան վարժարանը եւ մեր բոլոր ազգային եկեղեցական կառույցները այսօր կը շարունակեն գոյատեւել՝ ի գին մեծ գոհողութիւններու, ուրեմն տակաւին կը հաւատանք «շտկելու» կարեւորութեան: Ծտկել սխալը, ծուծը, ճեղու եմքական: Ծտկելով է, որ կարելի է պահել արժէքը:

Արժէքը՝ հայ մարդուն, հայ ինքնութեան եւ հայ ազգին:

ԱՐՏԱՍԱՎՄԱՆԻ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Ստորեւ կը հրատարակենք Լոս Անձելոսի Լիբանանի աւագ հիւպատոս ճոնի Իպրահիմի հետեւեալ շրջաբերականը, Լիբանանի յառաջիկայ Երեսփոխանական ընտրութեանց վերաբերեալ:

2013 թուականին Լիբանանի մէջ կայանալիք Երեսփոխանական ընտրութեանց որպէս նախապատրաստութիւն Լոս Անձելոսի Լիբանանի աւագ հիւպատոսութիւնը՝ այս շրջանի բոլոր լիբանանցիներուն կը յիշեցնէ որ իրենց անունները պէտք է արձանագրել տան 2013 թուականի երեսփոխանական ընտրութիւններու ընտրացուցակին մէջ: Այս մէկը պէտք է կատարուի Դեկտեմբեր 31, 2012-էն առաջ, անձամբ ներկայանալով հիւպատոսարանի գրասենեակը ստորագրութեան համար եւ կամ թղթատարով առաքել ամերիկեան նոտարի մօտ ստորագրելէ ետք, որուն պէտք է ընկերակցի անցազիրի կամ անձնաթուղթի պատճէնը: Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ հաստատել էլեկտրոնային հասցեով www.lebanonconsulatela.org կամ հեռաձայնել ընդհանուր հիւպատոսութեան գրասենեակը հետեւեալ հեռախօսահամարին 213-243-0999:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

ԸՆՏԱՆԻՔԻ ՆՈՐ ԱՆԴԱՄԻ՞ ԷՔ ՍՊԱՍՈՒՄ

ԼԻԱ ԽԱԶԻԿԵԱՆ

Երեխայ ունենալը գոյգերի կենսաբան մեծ իրադարձություն է: Ծնող դառնալու համար հարկաւոր է գոյգը պատրաստած լինի թէ՛ ֆիզիոլոգիայէս, թէ՛ հոգեպէս: Սա կարեւոր նախապայման է նորմալ յղիութեան եւ առողջ մանկիկ ծնելու համար: Քանի որ առողջ մանուկը աճում է առողջ մօր եւ առողջ ընտանիքի գրկում, եթէ պատրաստուած էք երեխայ ունենալ, ապա ուշադիր վերանայէք ձեր ամուսնական յարաբերութիւնները, աշխատէք հարթել ընտանեկան խնդիրները եւ փոքրիկի համար պատրաստել ապահով եւ լարածութիւնից հեռու, խաղաղ մի միջավայր:

Երբ դա պատահեց մեզ, մեծ խանդավառութեամբ սկսեցինք մեզ պատրաստել ընտանիքի նոր անդամին ընդունելու համար: Այս «ընդունման» ինչպիսութեան վերաբերեալ ուսումնասիրեցինք տարբեր գրքեր եւ յօդածներ, մասնակցեցինք դասարանների եւ սեմինարների, սկսեցինք շփուել այն գոյգերի հետ, ովքեր երեխայի էին սպասում, կամ արդէն լոյս աշխարհ էր եկել նրանց բալիկը, եւ փոխանակեցինք մեր փորձառութիւնները: Յաջորդ էջերում ներկայացուում է այս ընթացքում իմ հաւաքած տեղեկութիւնների կարեւորագոյնը, որը յոյսով եմ օգտակար լինի «Յոյս»-ի ընթերցողներին համար: Այս նիւթերում ամփոփ տեղեկութիւններ են մատուցում մօր առողջութեան, երեխայի ներարարքանդային աճի եւ անդային կարիքների մասին:

ՊԱՏՐԱՎՍ ԷՔ ՅՂԻԱՆԱԼՈՒ

Եթէ Ձեր ամուսինը եւ Դուք որոշել էք երեխայ ունենալ, ապա պէտք է քննադատաբար եւ գիտակցաբար գնահատէք Ձեր ապրելակերպը, ինչպէս նաեւ ընդհանուր առողջական վիճակը: Դա հարկաւոր է անել նախօրօք՝ յղիութիւնից 1-3 ամիս առաջ: Յղիանալու որոշումը հիանալի առիթ է առողջ կենսակերպի անցնելու եւ ծխելը թողնելու համար: Ծխելու վնասակար ազդեցութիւնը յղի կնոջ օրգանիզմի վրայ հաւաստիօրէն յայտնի է՝ պտղի զարգացման դանդաղեցում հիպոքսիա, վաղաժամ ծննդաբերութիւն եւ բազմաթիւ բարդութիւնների վտանգ: Պակաս վտանգաւոր չէ նաեւ պասիւ ծխելը:

Յանկացած ալկոհոլային խմիչքի օգտագործումը, անգամ ամենափոքր քանակութեամբ, բեղմնաւորման եւ յղիութեան ընթացքում անթոյլատրելի է, քանի որ թափանցում է պտղի արեան մէջ եւ պատճառ դառնում զարգացման արատների, մտաւոր յետամնացութեան: Բացի այդ, ալկոհոլի օգտագործումը կարող է յանգեցնել վիժման, մեռելածնութեան, վաղաժամ ծննդաբերութեան:

Անհրաժեշտ է հետեւել անդակարգին: Պէտք է կրճատել բարձր կալորիականութեամբ, ցածր սնուցողականութեամբ օժտած մթերքները՝ իւղային եւ քաղցր ուտեստները: Յանկալի է հարստացնել սնունդը ֆոլիկթթով (folic acid) հարուստ մթերքներով կամ ընդունել ֆոլիկթթի հաբեր: Աւելորդ քաշը կը վնասի միայն Ձեզ: Քաշի պակասը նոյնպէս բացասաբար է ազդում դաշտանային ցիկլի վրայ եւ իջեցնում յղիանալու հաւանականութիւնը: Յիշէք, որ հարկաւոր է հետե-

ւել քաշին յղիութեան ամբողջ ընթացքում, բայց ոչ մի դէպքում յանուն մարմնակազմածքի մի սահմանափակէք անհրաժեշտ նիւթերը, քանի որ այդպիսով Դուք գրկում էք Ձեզ եւ Ձեր երեխային անհրաժեշտ սննդանիւթերից, որոնց շնորհիւ նա զարգանում է:

Յղիութեան ընթացքում բժշկի մօտ ամէն այցելութեան ժամանակ Դուք պէտք է անպայման հետազօտէք: Ձեզ կը կշռեն, կը չափեն ճշնումը, որովայնի շրջագիծը եւ արգանդի յատակի բարձրութիւնը: Կը ստուգեն՝ կան արդեօք այտուցներ, կը լսեն պտղի սրտի զարկերակը:

Բուժաշխատողին այցելելով, կը ստանաք մանրակրկիտ խորհրդատուութիւն սննդի, առողջ ապրելակերպի, ֆիզիկական եւ սեռական ակտիւութեան, աշխատանքի, հանգստի, ռեժիմի եւ այլնի վերաբերեալ: Առաջին այցելութեան ժամանակ կը կատարել լաչնածաւալ հետազօտութիւն, կը գնահատել Ձեր ընդհանուր վիճակը: Կը կատարեն լաբորատոր քննութիւններ, արեան, մեզի ընդհանուր քննութիւն, քսուքի հետազօտութիւն՝ գոնոտեայի, տրիխոմոնիազի, կանդիդամիկոզի յայտնաբերման համար: Եթէ յղիութիւնը հաստատուած է, անպայման կորոշել արեան խումբը, շաքարի մակարդակը արեան մէջ: Կորոշել ռեզուս (RH) գործօնը, որը իրենից ներկայացնում է սպիտակուցային նիւթ եւ պարունակում է արեան կարմիր գնդիկներում: Այն յայտնաբերուած է 85% մարդկանց մօտ (ռեզուս-գործօնը՝ դրական): Բացակայութիւնը նշանակում է արեան բացասական ռեզուսի պատկանելութիւն: Այն ունի նշանակութիւն, եթէ Ձեր ամուսինը ունի դրական ռեզուս, իսկ Դուք բացասական, այդ դէպքում պտուղը կունենայ ռեզուս դրական պատկանելութիւն եւ հետագայ յղիութիւնների ժամանակ կարող են ծագել բարդութիւններ: Աւելի մանրամասն տեղեկութիւնների համար դիմէք Ձեր բժշկին:

Յղիութիւնը, երեխայի ծնունդը եւ մայրութիւնը որոշ փոփոխութիւններ կը մտցնեն Ձեր յարաբերութիւնների մէջ մտերիմների հետ: Սովորաբար մարդու ծնունդը տօն է եւ ուրախալի իրադարձութիւն, բայց որոշ մարդկանց համար դա անհանգստութիւն է եւ երբեմն վիճակի բարդացում: Այդ պատճառով յղիանալուց առաջ խորհրդակցէք Ձեր ամուսնու հետ կենսաքի սպասող փոփոխութիւնների, պրոբլեմների մասին:

Երեխայի ծնունդը նշանակում է նաեւ ծախսերի աւելացում: Դուք պէտք է հոգ տանէք ոչ միայն մահճակալի, հագուստի մասին, այլ լեւ պէտք է ամենօրեայ ծախսերը նախատեսէք՝ մանկան, նրա հետագայ խնամքի համար:

ՅՂԻՈՒԹԻՒՆԸ ՀԱՍՏԱՏԻՈՒՄ Է

Յղիութիւնը հաստատուած է թաւկենու (hcg) հորմոնի, գոնադոտրոպինի առկայութեամբ: Այդ անալիզը կատարուած է, երբ հորմոնի դաշտանային շաջորդ ցիկլի ժամկէտն լրանում է: Յղիութիւնը կարելի է ստուգել նաեւ տանը՝ յատուկ թեստերի միջոցով, որոնք կարող էք ձեռք բերել դեղատներից: Ուշադրութիւն դարձրէք այն հանգամանքին, որ Ձեզ հետաքրքրող հորմոնը աւելի շատ կայ առաւօտեան մեզի մէջ:

Յղիութեան հաստատման միջոցներից է նաեւ ուլտրաձայնային

ԼԱԻ ԸՆԿԵՐ ԱԻԵՏԻՍ ՆԱԶԱՐԵԱՆ

Հազար ու մի ճամբով անցայ, Ազնիւ ընկեր չգտայ, Սարեր, ձորեր եւ կտրեցի Ինձ սրտակից չըտեսայ...

Ողջ աշխարհը ես ման եկայ, Ինձ ցաւակից չգտայ... Ինչքա՛ն, ինչքա՛ն դու թափառես, Գլխիդ փորձանք կը բերես. Եթէ Աստու ճամբով գնաս, Սիրող ընկեր կը գտնես...

ԳՐՈՒՇՀԱՐՅԱՆՑ ԶՊՓԱԾՈՒ ԲԱՐԴՈՒՅԹՆԵՐ (շարք)

ԾԱՂԿԱՍՍՈՒՅՑ Բո հիշատակն է հավաքական հայ,

որ հանդիպեց վարդագոյնին, ես էլ ունեմ իմ անկյունը, չեմ նախանձում քո անկյունին:

քո պատվանդանին ծաղիկ եմ դնում, շուրջ երկու միլիոն անգամ էլ այսօր երկրպագում եմ, հետն էլ հորդորում, որ անմահ ես դու անապատի պես, որին տվել ես անուն ու պատիվ...

Գլորվում էր կապույտ գույնը, որ հանդիպեց դեղին գույնին, թող արարվի կանաչ գույնը, եկ, խառնվիր իմ անունին:

Գլորվում էր լույսն արեւի, որ տրոհվեց սպիտակը, մայրը երկինքն էր երեւի, որ պահպանեց հիշատակը:

Մեկ դար է արդեն, որ լռում ես դու, սալոր աչքերով հեռուն չես նայում, չես ճանաչում ինձ, չես տեսել երբեք, բայց ես գիտեմ քո անունն ու հասցեն, քո սխալն անգամ դաս է ինձ համար, պատմական ճշիւն՝ ազգային սայլի...

ԾԻԾԵՆԱԿԱԲԵՐԴ Ծուխը՝ հոգուն, հուրը՝ ոգուն, խոնարհված եմ տասներկու պատ, լույսն իմ վերքը չի ամոքում, ջերմութիւնն էլ չունի հեքիսաթ:

Որի տառապած անիվներն ասես

Եկուն բոցերն իրարամերժ գալարվում են, մերկապարուն, հիշատակի անմահ ջրվեժ, ես էլ եմ կայծ քո շուրջպարուն:

չորս արեւներ են սարն ի վար իջնող՝ առանց եզների միջամտության, առանց սայլվորի հարայիրոցի, սակայն հայեցի իր ճանապարհով,

Ավելին եմ, քան կարծում ես, միլիոն անգամ եմ նախատում, կորած բախտն իմ արժարժումն էս, հարությունն իմ չես նկատում:

ԺԱՆԳՈՏ ԳԵՐԱՆԴԻՆ Կախված է սյունից հիշադրության չափ անարգել, ազատ, մեկուսի եւ լուռ, մահվան նշան չէ, մի փշաքաղվիր:

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ - 97 Ի սկզբանէ էր խայթոցը... Փաթթոցավորը մոռանալու բան չէ, ես ինձ չեմ ներում, որ սողուն եմ

ԺԱՆԳՈՏ ԳԵՐԱՆԴԻՆ Կախված է սյունից հիշադրության չափ անարգել, ազատ, մեկուսի եւ լուռ, մահվան նշան չէ, մի փշաքաղվիր:

Ես իմ քրիստոնյա ջերմության ու խնամքով պատմուճանական տաքացրել եմ 1895-96 հատ օձ, հետո էլի մի թունավոր վտանգ՝

Սիգախոտն այնքա՛ն երես է առել, որ սվինի պես հայացք է ծակում, անտարբերության իր երանգներով:

1915 հատ անշոքրակալներ, իսկ Ապրիլ ամսին եւս 24 հատ... Արդյունքում ուրացողներն այդ մահացու ինձ խայթել են

Հայտնի չէ, քամին ե՞րբ կժամանի, ե՞րբ տակնուվրա կանի ամեն ինչ, որ ծուխը ծնվի, բոցն էլ երեւա:

շուրջ երկու միլիոն անգամ... Եւ 800 տարի շարունակ ես տաքացրել եմ նրանց անխտիր եւ սպանվել եմ իմ իսկ ծոցում,

ԾԻԱԾԱՆԻ ԿՈՃԱԿՆԵՐԸ Գլորվում էր կարմիր գույնը,

բայց նույնքան անգամ էլ գոցն հարությունն եմ առել, որ հիմա կամ... Ես դարավոր թշնամիներ ունեմ, եւ ոչ մի բարեկամ:

հետազօտութիւնը: Ուլտրաձայնային հետազօտութիւնը բեղմնաւորումից 3-6 շաբաթ անց կարող է յայտնաբերել սաղմի սրտի զարկերը: Պտղի սրտի զարկերը հնարաւոր է լսել բեղմնաւորումից 10 շաբաթ անց: Պտղի շարժումները կարելի է գգալ յղիութեան մօտաւորապէս 18-րդ շաբաթում: «Յոյս»

ՀՈՒՆԳԱՐՆ ՈՒ ԱԶԵՐԻՆ ՄԻԱՍՆԱԲԱՐ ՆՇԵՑԻՆ ՀԱՅԱԶԳԻ ՍՊԱՅ ԳՈՒՐԳԵՆ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԿԱՑԻՆԱՀԱՐՄԱՆ ՈՒԹՆԱՄԵԱԿԸ

Մարումակուած էջ 1-էն

Ատրպէյճանի մէջ Հունգարիոյ ոն-րադատ Արդարադատ Ատեանը ցկեանս վնիո արձակեց անոր դէմ: Ա.գերի իշխանութիւնները հանգիստ չնստան: Անոնց նպատակն էր ամէն գնով Ատրպէյճան փոխադրել Սաֆարովը: Անոնք հետապնդեցին իրենց հարցը, որուն հանգոյցը ի վերջոյ ֆակուսեցաւ վերջերս, ի նպատակ Սաֆարովին, համաձայն Դատապարտուած Անձնաբու Փոխանցման 1938թ. Սթրասպուրկի Համաձայնագրին որ, իրքերէ թէյանցագործը ընդունող կողմը անոր պատիժի կրումը կամ փոխանցումը պէտք է տնօրինէ ստանձնող երկրի իրաւական եւ վարչական գործընթացներուն համաձայն: Հունգարիա, կասկած չկայ, երկարատեւ բանակցութիւններէ ետք տեղի տալով, Սաֆարովը յանձնեց ատրպէյճանական իշխանութեան, հիմնուելով ազգային ռերածին արդարադատութեան նախարարութեան՝ Հունգարիոյ տուած հաւաստիացումներուն վրայ, թէ նման յանցագործութիւն մը ըստ ատրպէյճանական քրէական օրէնսգրքին, կ'արժանանայ ցմահ ազատազրկումի: Խօսք մէկ բան, իրողութիւնը՝ մէկ ուրիշ բան: Հետեւիմք...

Հունգարիոյ տուած իր խոստումին տրամագծօրէն ներհակ ընթացքով մը, Ատրպէյճան իր նախընթացը չունեցող ընդունելութիւն մը կազմակերպեց, անընդունելի պատիւներով դիմաւորելու համար Սաֆարովը, ինչպէս պիտի ըլլար պատերազմի դաշտէն տուն վերադարձող յաղթական զօրավար մը պարագային:

Ալի եւ, գերագանցապէս բարձր եւ օրինակելի հերոսութիւն համարելով Սաֆարովի կացինահարելը հայ սպայի մը, պարգապէս հայ ըլլալուն համար, անմիջական ներում, հերոսի կոչում, հազարապետի կարգ, վերադարձ բանակ, բանտարկութեան ութ տարիներու թոշակներու վճարում, նուէր տուն եւ ազգային հերոսի կոչում շնորհեց անոր, որպէս տիպար օրինակ? ազգերի նոր սերունդներուն:

Թրֆածին ազգերէն տարբեր գործընթաց չէին ակնկալել: Ալի եւ Էն՝ բնաւ երբեք: Անոնց կատարածը վիրաւորանք անգամ չենք նկատելու կատի առնելով աշխարհով մէկ ծանօթ, թրֆարոյ լպրծուն, յեղեղուն, անկարագիր, շարդարար, այլապէս, ցեղասպան բնութագիրը:

Մեզ հիասթափեցնողը, մեր ժողովուրդի բարեկամ նանչուած յառաջադէմ ֆաղափարներէն մը

աշխարհով ծանօթ Հունգարիոյ... (չեմ'յանդգնիր իր արարքը բնորոշել պարզ բարեմտութեամբ գործուած արարք)՝ մեզի համար անակնկալ, անհասկնալի եւ անբացատրելի հակահայ վերաբերմունքն է, որ իր հողամասին վրայ, անմեղ հայ սպայ մը կացինահարող ազգերի մարդասպան, հունգար արդարադատութեամբ ցկեանս բանտարկութեան դատապարտուած Սաֆարովը, կը փոխանցէ Ատրպէյճանին փոխան երեսուն արծաթի..., ինչպէս կը գուշակուի քիչ մը ամէն մակարդակի վրայ:

Ինչ պէտք է ըլլան մեզի համար խիստ կասկածելի, անհատալի եւ յերիւրածոյ հանգամանքները Սաֆարովի՝ Ատրպէյճանին եղբրական փոխանցման դաւադրական հանգամանքները, Հունգարիան պիտի չդադրի բնաւ դատապարտելի ըլլալէ, անարգանքի սիւնին գամուած մնալէ, մասնաւորաբար հայ ազգի եւ ընդհանրապէս յառաջադէմ մարդկութեան համար: Երբէ՞:

Այս բոլորէն վերջ սակայն, արդեօ՞ք մեր հայրենի դիւանագիտութիւնը իր մասն պատասխանատութեան բաժինը չունի այս տխուր իրադարձութիւններուն մէջ: Կարելի՞ է հաւատալ, որ երկիր մը, իրեն դէմ միութեան դաւի մը հոստոտութիւն առած չ'ըլլայ: Եթէ այդպէս է, ո՞ր մնացին խնդրոյ առարկայ երկրի մասնագիտական դիւանագիտական հոստոտութիւնը, նախատեսութիւնը եւ կանխարգելումը: Մեր հայրենի դիւանագիտութիւնը բնաւ չ'անդրադարձա՞ւ Սաֆարովի արգելափակումէն անմիջապէս ետք, Հունգարիոյ մէջ Ատրպէյճանի բացած դեսպանատան հետակայ ծրագրին մասին: Արդ, ինչպէ՞ս մեկնաբանել Նախագահ Սերժ Սարգսեանի յանկարծական փոթորկումը, երբ կ'իմանայ հունգար-ազգերի եղբրական խաղը՝ հայուն գլխուն: Եթէ իրապէս անտեղեկութիւն կայ, Հայաստան մեղաւոր է, որուն պատասխանատուութիւնը անշուշտ կը բառնայ իր արտգործ նախարարութեան ուսերուն, թող որ նաեւ, իշխանութիւններուն վերագրուող թերահաւատութեան վկայութիւններ կը շրջին մեր մաւրոյ սիւնակներու տարածքին...:

Կը հաւատանք, թէ հայրենի դիւանագիտական աշարժութիւնն ու կանխագուշակումը կրնային առաջին առնել հունգար եւ ազգերի իշխանութիւններու միասնաբար մշակած հայազգի շնորհալի եւ անմեղ սպայ՝ Գուրգէն Մարգարեանի կացինահարման տխրարոյ ուրմամբակի «ոգեկոչման»...

ԻՆՉՊԻՍԻ ԱԶԳ ԵՆՔ

Մարումակուած էջ 6-էն

հրաւերներու դէմ հանդիման կուզանք, կը նախընտրենք հետեւիլ Ուիլերմ Սարոյեանի խօսքերուն եւ աշխարհի տարածքին փոքրիկ փոքրիկ Հայաստաններ կերտել,

որոնք վստահաբար պիտի չքանան քանի մը սերունդներ ետք, փոխանակ անսալու Չարենցեան պատգամին՝ «Ո՞վ հայ ժողովուրդ, քո միակ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ քո ՀԱՒԱՔԱԿԱՆ ուժի մէջ է»: Ի՞նչպիսի ազգ ենք:

ԱՐԴԵՕՔ ՄԻՐԻԱՀԱՅԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ

Մարումակուած էջ 7-էն

յետոյ յաջորդը հենց Ալի եւ լինի, որովհետեւ դժուար է հաշտուել, որ այդքան նախատուարներն ընդամէնը մի ինքնահաւանի քմահաճոյքների իրականացմանը պիտի ծառայեն: Եւ առաւել հաւանական է, որ ապստամբների ղեկավարը Ռամիլ Սաֆարովը լինի, հաստա-

տելով իր կառավարելի անասուն լինելու կարգավիճակը... «Արաբական գարուն»-ի հետքերը, որքան էլ փորձում են շեղել, թեքում են Ատրպէյճանի կողմը: Իսկ առայժմ կրակոցները հնչում են Սիրիայում, որտեղ, ՄԱԿի վիճակագրութեամբ, հակամարտութեան զոհերի թիւը մօտենում է 30 հազարի: Եւ սա դեռ վերջը չէ...

ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՎԵՐԱՄՈՒՏԻՆ ԱՌԹԻ

Մարումակուած էջ 13-էն

վարկաւորուած ըլլայ (accredited): Այս մարտահրաւերն ալ յաղթահարեցին մեր տնօրէններն ու հոգաբարձուները՝ ի գին մեծ զոհողութեանց: Որքան որ տեղեակ ենք մեր բոլոր երկրորդական վարժարանները վարկաւորուած են: Հայ դպրոցի նուէր տալը գանձարանին մէջ դրամ դնելու պէս է: Հայ վարժարանէ մը շրջանաւարտները առնուազն կարեւոր տոկոս մը հարիւրով պիտի վերադարձնեն իրենց ստացածը ծնողքին կամ հայ ժողովուրդին: Հայ շրջանաւարտը համալսարանաւարտ ըլլայ կամ ոչ, շատ աւելի դիւրաւ պիտի դիմագրուէ 21րդ դարու մարտահրաւերները՝ քաղաքական, ազգային, տնտեսական, հայակերտումի): Հինգ ու կէս դար օտար տիրապետութեան տակ ապրելով, տառապած ենք հայ ղեկավարի տագնապէ: Այս օրերուն ալ հայ սփիւռքն ալ պէտք ունի երկլեզու ղեկավարի Հայաստանի, Արցախի, Հայ Դատի համար: Օգտուելու է այս օրերու աշխարհի մէջ հայ քաղաքական բեմի միասնականութենէն:

Ի՞նչ կրնան ընկել հայ ծնողները

Եթէ հայ դպրոց մը նկատի ունիք եւ եթէ ձեր մօտիկ ազգականներէն մէկը պաշտօնեայ է մեծ դրամատնային կամ այլ ընկերութեան մը մէջ, տուեալ պաշտօնեան թող ըսէ փոխ տնօրէնին (կամ այլ

պատասխանատուի մը) կը փափաքի նուիրատուութիւն մը ընել տուեալ երկրորդական վարժարանին եւ ուզէ matching grant-ի գրքոյկը: Այս գրքոյկը կարգապէս կամ ոչ՝ ներկայացնէ հայ դպրոցին տնօրէնին: Վստահ թող ըլլայ որ տնօրէնը (դպրոցին) պիտի ձեւաւորէ եւ հայ աշակերտի մը կրթաթոշակը (կամ կարեւոր տոկոս մը) պիտի ապահովէ:

Պէտք է շեշտել որ պաշտօնեային նուիրատուութիւնը պէտք է ըլլայ ուղղակի դպրոցին առանց ունէ նախապայմանի: Պաշտօնեան բացարձակապէս պէտք չէ ըսէ իր գործած ընկերութեան որ նկատի ունի տուեալ աշակերտ մը: Զգուշ պիտի մերժուի:

Պաշտօնեան պէտք է ուզէ նաեւ այն թերթիկները որոնք պիտի լրացուին դպրոցին կողմէ, որպէսզի դպրոցը ստանայ ընկերութենէն նուիրատուութեան համեմատ գումարը: Նուիրատու պաշտօնեան աւելի յարգ պիտի ունենայ ընկերութեան մօտ, քանի որ նախանձախնդիր է դպրոցներու նիւթական կարիքները թեթեւեղելով:

Հայ ծնողները գիտնալու են որ տարին միլիոններով նուիրատուութիւններ կը կատարուին այս ձեւի տակ, ոչ հայ ուսումնական հաստատութիւններու:

Աւելի քան մէկ միլիոն ամերիկահայերուն երկլեզու ղեկավար պատրաստող հայ դպրոցներուն կ'արժէ նիւթապէս օգնել, մանաւանդ համեմատուած նուիրատուութեամբ:

ՑԱԿՈՒՔ ՊԱԼԵՍՏԻՆ

ՑԱԿՈՒՔ ՊԱԼԵՍՏԻՆԻ մահուան տխուր առիթով Տիար Սարգիս Շիրինեան իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի տիկնոջ եւ Տէր եւ Տիկ. Գրիգոր Այվազեաններուն:

ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼԸ
9 Սեպտեմբեր, 2012 Լոս Անճելոս
Պրն. Անդրանիկ Հազարեան ընդ Օր. Պերճուհի Փոլատեան
Մեր ջերմ շնորհակցութիւնները նորապսակ զոյգին եւ անոնց ծնողներուն, ի մասնաւորի Տէր եւ Տիկ. Մանուկ եւ Նազիկ Փոլատեաններուն:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գանձնք նուիրել
Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ:
G.Y.O. 1060 N. ALLEN AVE.
PASADENA, CA 91104

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ՎԱՍԱՐ)
ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԹՆԵՐՈՒ ՎԱՍԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՄԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԵՆՈՒԱԶՆԵԼ (626) 797-7680

ԲԱՆԱՍԵՐ ՈՒ ՊԱՏՄԱԲԱՆ ԱՐՇԱԿ ԱԼՊՕՅԱՃԵԱՆ

Շարունակում էջ 15-էն

Ալպոյաճեան 1959ին «ուխտի զնայ» իր պաշտած հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան եւ էջմիածին: Ալպոյաճեան Երեւանի մէջ կ'արժանանայ մեծ ընդունելութեան: Իր այցելութեան առթիւ, տեղի կ'ունենան Խորհրդակցական հանդիպումներ գիտական թէ՛ ակադեմիական մակարդակով, զանազան խնդիրներու շուրջ: Վերադարձաւ Գահրէէ աչն խոր համոզումով, որ Հայաստանը նախկին խեղճ, անօգնական եւ անգոր երկիրը չէ այլեւս, թէ՛ ան ներկայիս արդէն կը քալէ դէպի նոր աննախընթաց փայլուն ժամանակաշրջան:

Դեռ 1922ին, Արշակ Ալպոյաճեան կը գրէր Խորհրդային Հայաստանի մասին. «Համոզուած՝ թէ ո՛րքան ալ այսօր Հայաստանի անկախութիւնը ինդրական է, սակայն Հայոց հաւատքն անասան է հայրենիքի մը կազմութեան համար, կ'ըսենք Անկախ Հայաստանի մը համար»: Եւ կամ՝ 1923ին դեռ կը գրէր. «Իրապաշտօրէն արձանագրելու ենք որ (Խորհրդային կարգերը) խաղաղութիւն բերաւ, որու շնորհիւ կազդուրման շրջան մը պիտի բոլորտէ մեր հայրենիքն ու իր ժողովուրդը ...»:

Գիրերու Գիւտի 1600ամեակին առթիւ եւս, 1962ին, հրաւէր կը ստանայ ներկայ գտնուելու հանդիսութեանց, սակայն առողջական պատճառներով, վերջին պահուն, ստիպողաբար կը հրաժարի մեկնելէ:

Ուղիղ նկարագրի տէր եւ անկեղծ մարդ էր ան: Առանց շողոքորթելու ամէնուն երեսին կու տար դիմացիին թերութիւնները: Անվճատ աշխատող մը եղած է ան ազգային կեանքին մէջ եւ աշխատանքը իր փառքը նկատած է միշտ, կեանքին իմաստը փնտռած եւ գտած է օգտաշատ աշխատանքի մէջ:

ԵԹԷ ՊԵՏՔ ԸԼԼԱՐ, ՆՈՅՆԻՍԿ ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱՊԻ ԹԵՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԿՐՆԱՐ ՄԱՏՆԱՆՇԵԼ

Իր «Անձեր եւ անցինք» յօդուածով եթէ պէտք ըլլար կրնար նոյնիսկ մերկայցնել Գրիգոր Զօհրապը. այնքան անկեղծ էր ինքզինքին հետ: Կարդանք այս քանի մը պարբերութիւնները ցոյց տալու իր անկողմնակալութիւնը:

«Իմ 60 տարուան գործօն կեանքիս ընթացքին տեսածներուս վրայ հիմնուելով կրնամ ըսել, թէ՛ ազգային պատուակալ պաշտօններու կոչուած բոլոր հայ անհատները մեծ մասամբ բարեմտութեամբ աշխատողներ եղած են. սակայն շատ քիչ անգամ օգտակար եղած կամ կրցած են ըլլալ շատ մը պատճառներով, գորս մի առ մի բացատրելի շատ երկար աշխատութիւն մը պիտի ըլլար: Այդ պատճառներէն մէկը մեր ազգային գործերու մատակարարութեան ողբալի վիճակին գլխաւոր պատճառը, մեր ազգային գործերու վարիչներուն անկարողութիւնն է»:

«Ամենէն ուշիմներէն, ամենէն ճարտասաններէն, վերջապէս ամենէն արժէքաւորներէն մէկը, իբրեւ իմացականութիւն, Գրիգոր Զօհրապ, որուն համար ամէնքն ալ հիացում ունէին, թերեւս անհաւատալի ըլլայ թէ ըսեմ թէ դժբախտաբար մէկն էր անոնցմէ, որոնք Ազգային Սահմանադրութիւնն իսկ

չեն կարդացած, ուր մնաց ուսումնասիրելը: (Զօհրապ ասպարէզով փաստաբան էր. ՅՎ): Քանի քանի անգամներ վիճաբանութեան առարկայ հարցի մը համար խօսք առած է եւ յայտարարած է թէ այս մասին Սահմանադրութեան տրամադրութիւնը չի գիտէր, սակայն տրամաբանութիւնը կը պահանջէ որ այդպէս ըլլայ: Զօհրապ իր պերճախօսութեամբ եւ օրէնսգիտական հմտութեամբ կը պարտկէր իր պակաս կողմը, իսկ մեծամասնութիւնը մեր երեսփոխաններուն, որոնք իրեն պէս անգիտակ էին այն օրէնքին, որուն ուժով պաշտօնի կոչուած էին, ոչինչ ունէին փոխարինելու համար իրենց տգիտութիւնը եւ ծիծաղելի կ'ըլլային»:

Հոս արձանագրելու ենք որ Ալպոյաճեան հրապարակագրութեան մէջ եղաւ մաքուր, պարկեշտ, սակայն աններող. բնաւ չվարանցաւ մտրակելու հակահայաստանեան տարրերը իր կճող յօդուածներով:

Անոր պատմական պրպտումները եղած են ճշգրիտ, վաւերական եւ անանձնական, այդ իսկ պատճառով, իր հեղինակութիւնը եղաւ մեծանձն եւ գնահատութիւնը իր գործերուն եղաւ համահայկական, հասնելով մինչեւ մայր հայրենիքի ծոցը:

Կը պակսէր իրեն ունենալու օգնական քարտուղար մը, աւելի կազմակերպուած կերպով եւ հաւանաբար ալ աւելի ներկայանալի մատուցելու իր երկերը. Վան մը որ օրին Անթիլիասի մայրավանքին մէջ ըրաւ Սիմոն Սիմոնեան որպէս գիտական աշխատակիցը Գարեգին Յովսէփեանց կաթողիկոսին:

ՀԱՅ ՈՒՍՈՒՅԻՉԸ

Ազգային խանդավառ եռուզեռ մը կ'ապրէր եգիպտահայութիւնը յետ Առաջին Համաշխարհային Պատերազմին: Նիւթապէս աւելի բարեկեցիկ էր եգիպտահայուն կեանքը եւ ազգային հաստատութիւններու նիւթական պարտաւորութիւնները աւելի նուազ էին բաղդատմամբ շրջանի այլ գաղութներուն, շնորհիւ եգիպտոս հաստատուած աղա-փաշաներուն:

Արշակ Ալպոյաճեանի տարիներու վրայ երկարող ուսուցչական ասպարէզը մեծապէս գնահատուեցաւ որքան դպրոցի հոգավարձուներուն, նոյնքան՝ ուսանողութեան կողմէ: Իր բազմահարիւր նախկին աշակերտները հպարտութեամբ եւ մեծ հաճոյքով կը յիշեն ուսանողութեան այն օրերը, ուր Պարոն Ալպոյաճեանը ունեցած են իբրեւ ուսուցիչ եւ դաստիարակ:

ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ՝ ԻՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԱՇԽԱՐՀԻ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Աւելի քան 60 տարիներու նամակագրութիւն մը պահած է Ալպոյաճեան: Առանձինն այդ արդէն կ'արժէր հրատարակել լոյս աշխարհ բերելու ամբողջ ժամանակաշրջանի մը կենդանի ազգային կեանքը իր տխուր ու երջանիկ օրերով, իր յուսահատութիւններով ու ձեռքբերումներով: Իր նամակները, իր աշխատութեան պէս, կենսալից էին եւ անսպառ ոյժի մը, կորովի մտքի մը արտայայտութիւնը: Հոս կ'արձանագրենք նիւ երբքաբնակ մտաւորական Միհրդատ Թիրեաքեանին 1952ին գրած նամակէն հատուած մը, ցոյց տալու Ալպոյաճեանի յարավերութեան ան-

կեղծութիւնն ու մտերմութիւնը հեռուոր մէկ բարեկամին հետ:

«Դժուար պայմաններու մէջ եմ եւ գլուխ քերելու իսկ ժամանակ չունիմ: Թողատի հայոց պատմութիւնը աւարտելու վրայ է եւ հետեւաբար ամբողջ ժամանակ կը գրաւէ: Գարեգին Կաթողիկոս (Յովսէփեանց) եղեր ըսեր է «շուտ ըրէ՛ք, ժամանակ չկայ» ... քիչ մը ուշ իմացուած ճշմարտութիւն մը, որ մեծ իրողութիւն մըն էր որ իրմէ չէր ըմբռնուած իր ժամանակին: Ես ալ ինքզինքս կ'ըսեմ ամէն օր. «շուտ ըրէ՛ք» որպէսզի կիսահատ բան մը չխողովմ եւ ասոր համար շատ կը տառապիմ եւ ամէն օր սոսկում ունիմ թէ օր մը պիտի այլանուիմ: Անով հանդերձ կ'աշխատիմ կարծես թէ շտապով, ճիշդ այս պատճառով»:

Նշենք որ Միհրդատ Թիրեաքեանին հօր՝ Տոքթ. Յարութիւն խան Թիրեաքեանի կենսագիրը եղած է Ալպոյաճեան: Այդ աշխատութիւնը լոյս տեսած է 1927ի Թէոդիկի «Ամէնուն Տարեցոյց»ին մէջ, Ս. Անգեղեաց գրական ծածկանունով: Ան գրի առած է խանին քաղաքական գործունէութիւնը

1883-1891 թուականներու, երբ Պոլսոյ մէջ վարած էր Ազգային ժողովի ատենապետութիւնը Ներսէս Վարժապետեանի, Յարութիւն Վեհապետեանի եւ Խորհրդի Աշքեան (Նարպէյ) պատրիարքութեան ժամանակ:

Սակայն, բոլորովին ալ ճիշդ չէր իր ցատկը. բաղդատմամբ իր սերունդին շատ-շատերուն, ան տուաւ լիաբուն եւ բոլորանուէր հայրենասիրութեամբ, նախանձախնդիր հայ վաւերական արժէքներու գնահատման եւ տարածման տարաւ մեղուաջան աշխատանք, մնալով լուրջ եւ խոհական իր դատումներուն մէջ:

ԻՐ ՏԵՂԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Ալպոյաճեան մեր պատմութեան էջերուն մէջ պիտի յիշատակուի որպէս պատմաբան, բանասէր, մանկավարժ ու հասարակական գործիչ:

Պոլսոյ այն սերունդին մտաւորականներէն էր, որ մինչեւ Մեծ Եղեռնը արեւմտահայ ազգային եւ իմացական կեանքը վարեցին, զայն լուսաւոր ընծայեցին: Եթէ մինչ այդ Մեծ Եղեռնէն ետք մատի վրայ համրուող դէմքեր, վերապրողներ մնացին, ապա անոնք օղակեցին խղուած շղթան իր ամբողջութեան մէջ՝ իր ազգային գործունէութեամբ, իր փորձառութեամբ՝ Ալպոյաճեան այն գործիչներէն էր, որոնց վաստակը ազդու նպաստ մը կը հանդիսանար նոր կեանքի մը համար:

Ալպոյաճեան ամենէն աւելի սիրեց իր պատմագրի կոչումը, կեանքը տրամադրեց իր վաստակին, զայն ընդունեց որպէս տիեզե-

րականին արձագանգը ընդգրկող հակայ մը: Ան ապրեցաւ իր իմացական կեանքով, հայեցողական զգայնութեամբ ապրեցաւ հայուն 60 դարերու կեանքը, սերունդ առ սերունդ եւ ահա՛ հոս հայ ուսուցիչը իր մատենը ընծայեց ապագայ սերունդներուն մատչելի դարձնելով կարելիութիւնը նոյն ապրումներուն, որպէսզի նորեր այդ դարերուն վրայ տարածեն իրենց կեանքի հորիզոնը եւ պատմութեան հետ յառաջանան, ամենայն վատահոսութեամբ, դէպի պայծառ ապագան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Արշակ Աննիկին տեսած էր Կէտիկ Բաշայի իր վարեկամին տունը. կարուհի էր, Վարձրահասակ թուխ աղջիկ մը: Արշակ միշտ իր վրայ կը գուրգուրար: Բարձր նկարագրի տէր Արշակ եւ Աննիկ 1909ին ամուսնացան եւ երջանիկ ընտանիք մը կազմեցին: Ունեցան մանչ գաւակ մը՝ Սիմոն անունով:

Դժբախտաբար, աւելի ուշ, իր կեանքը թունաւորուած է իր կնոջ՝ Աննիկին հիւանդագին վիճակին պատճառով, սակայն ան իբրեւ տիպար ամուսին, առանց զանգատելու եւ առանց յուսահատելու, տարիներ շարունակ եւ անօրինակ համբերութեամբ եւ նուիրումով դարմանած, խնամած, պահած ու պահպանած է իր կեանքին ընկերը, մինչեւ անոր վերջին շունջը՝ 1941: Այդ իսկ պատճառով ալ իր բովանդակ ժամանակը կ'անցնէր իր տան մէջ մէկ կողմէն խնամելով կինը եւ միւս կողմէն կարդալով ու գրելով: Նիւթական անբաւարար վիճակը թոյլ չէր տար որ ամբողջական ժամանակով օգնական մը կարենար ունենալ տան մէջ:

ՄԱՀԸ

Կը մահանայ 83 տարեկանին, Յունիս 24, 1962ին Գահրէի մէջ, երեկոյեան ժամը 7ին, իր աշխատութեան սեղանին առջեւ եւ գրիչը ձեռքը: Սրտի կաթուածով վերջ կը գտնէ Արշակ Ալպոյաճեանի այնքան օգտակար եւ արդիւնաւէտ հարուստ կեանքը: Ի գնահատութիւն իր վաստակաշատ անցեալին, կատարուեցաւ ազգային յուղարկաւորութիւն Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ: Թեմակալ Առաջնորդ Մամբրէ Արք. Սիրունեան խօսեցաւ դամբանականը որակելով ողբացեալ ընկերը որպէս «աշխատանքի հերոս»:

Բանասէր, պատմավան, ազգային գործիչ, կրթական մշակ ու հրապարակագիր Արշակ Ալպոյաճեան կը պատկանի շարքին սփիւռքահայ այն մտաւորականներուն, որոնք եղան հոգեպէս կապուած հայրենի երկրին՝ Խորհրդային Հայաստանին, հետեւելով անոր գարգացումին ու վարգաւաճումին եւ ուրախացան իրենց արեւակից հարգատներու յաջողութեամբ:

Նիւ Եորք

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ARMENIAN INDEPENDENCE DAY

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ

Փառապանոց FESTIVAL

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION



SUNDAY SEPTEMBER

16, 2012

VERDUGO PARK

GLENDALE

1621 Canada Blvd., Glendale, CA, 91206

Starting at 11:00 am

Special Performances by:



Hosted by:



Dance Performances By:

Nor Serount Dance Ensemble
Lilia Dance Studio

DJ By:



Sponsors

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ
ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ
ՓՈԲԵՐՈՒ ԽԱՂԵՐ
ՀԱՄԱԴԱՍ ՃԱՇԵՐ

Live Music
Dancing
Art Work Exhibition
Kids Games
Armenian Food



To reserve your vendor booth
please call Nor Serount Cultural Association

Ձեր կրպակները ապահովելու համար
հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միության

(818) 391-7938



www.massispost.com